

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16634

ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ИЗДАНИЕ ЗАЯН ԽՈԽՄԵՐԾ ԱԳ. ՀՎԲՅԱ

Լ. ԱՌԴԱՐԵԼՅԱՆ

ՄԻ ԿԱՐ
ՀՅԱՂԻ ՀԱՅԱՐ

ՎՐԱ ՀԱՅԱՀԱ ՀԱՅԱ ՀԱՅԱ ՎՐԱ ՎՐԱ

891.99
U - 16

Տ 324

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲՈՅԱՐ ՅԵՐԱԲԵՐԻ, ՄԻԱՅԻ

50

ՀՐԱՄԱՆԱԿԱՆ ՊՈՐՈՎՈՒԹՅՈՒՆ «ԿԱՊ» ՊՈՐՈՎՈՒԹՅՈՒՆ
ИЗДАНИЕ ЗАК. АГ. «СВЯЗЬ»

891.99

Ա-16

Լ. ԱՂԱՋԱՆԻ

ՄԻ ԿՏՈՐ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ

Գիես Յ ԳՈՐԾՈՂ. - ՅԵՐԱԲԵՐԻ ՅԵՐԿՈՒ
ՊԱՑԿԵՐՈՎԸ



2003

Թիվից - 1924

СЮРВАРДИ

Пьеса „ИЗ ЗА КЛОЧКА ЗЕМЛИ“ Л. Сагателяна уже 3-й год, как вошла в репертуар армянского академического театра, вызвав живой интерес в широких общественных массах и в прессе.

Многочисленные и положительные критические отзывы о пьесе в армянской, русской, греческой, и тюркской периодической печати, литературный суд над пьесой, перевод ее на турецкий язык доказали жизненность и бытовой ее интерес.

Желание широко ознакомить армянское общество с пьесой Л. САГАТЕЛЯНА побудило нас взять на себя ее издание.

От Издательства.



25483-61

Главлит № 2160. Тифлис Тираж 1000.

թիգրա, ք. 8, Կ. Ա. Գոլիկով, Տբեկոմ 4-րդ տպ., Պաշհ. 3.

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Մի կտոր հողի համարը» ծնունդ և մեր նախառավատական շրջանի և, առաջին հայացքից, կարծես տեղ չունի խորհրդային մեր միջավազրում։ Սակայն դա միայն առաջին հայացքից, ավելի խորը դիտողությունը ցույց է տալիս, վոր անցյալի բարեփերից գեռ չենք աղատազրվել ամրողջապես, վորովհետև Խորհրդային իշխանությունը կախարդական գավառան չունի ձեռքին, վորպեսզի հրաշքներ գործի խակ Յ—Է տարվա կուլտուրական աշխատանքով, ավերակ մի յերկրում, փոխել, վերացնել այն, ինչ ժառանգություն են թողել մեզ հարցուրավոր ձիգ տարիներ, տասնյակ սերունդներ,—կլինի ամելի, քան տարորինակ լավատեսություն։

«Մի կտոր հողի համարը» կենցաղական գրվածք և, ուր իրեւ հայելու մեջ, ամենայն հարազատությամբ, անդրադարձել ե, վոչ միայն հայ՝ հետամնաց զյուղը, այլ և, իր կուլտուրական կյանքով և կենցաղով հայ իրականությանը չափազանց մոտիկ, Աղբբեջանի, Գաղրատանի և Աջարիայի զյուղական իրականությունը, այդ և պատճառը, վոր թյուրբական պետական ակադեմիկ գրամատիկական խումբը թարգմանել և տվել

Սաղաթելյանի գեռ ձեռագիր այս պիեսը և մոցբել և
իր բեակերտուարի մեջ, իբրև թյուրքական միջավայրին
հարազատ մի գործ:

Հողը յերկրագործ աշխատավորի համար նույնն է,
ինչ վոր դրամագլուխը կապիտալիստի համար, իրա
զորեղ դիբբի ու նյութական բարեկեցության տեսա-
կետից:

Հողը գյուղական միջավայրի գլխավոր առանց-
քըն ե, վորի շուրջն և պտուղում գյուղացու առանին
կյանքն իր ամբողջությամբ:

Այդ և պատճառը, վոր հողաբաժանության ժա-
մանակ, մի կտոր նոր հող ձեռք բերելու, կամ ունե-
ցածից չզրկվելու համար, գյուղացին՝ գեռ աշխարհ
չեկած իր յերեխային, կամ ընտանիքի մեռած ան-
դամին, համարում և «նաֆար»—շունչ, և այդ կեղծիքը
բացողի գլուխն և ջարդվում հաճախ: Իսկ յեթե նո-
տառու զավակ ունի, թեկուզ անշափահաս, անբնական
չի համարում, վոր նա հողաբաժանության ձայն լը-
սելիս, պսակի նրան՝ թեկուզ նրանից յերկու տակ մեծ
աղջկա հետ, վորպեսզի՝ համ հողից զըրկվի, համ ել
աշխատող ձեռք տուն բերի:

Այդպիսով ստեղծված զբանայի ներուների վօշ
կամքը, վնչ զգացումները չեն հետաքրքրում Սրբու և
Գրիգոր ամիներին, վորովհետեւ նրանիք՝ «վոր պսակվել
են իրենց ծնողների ցանկությամբ, ինչ պակաս լավ
ամուսիններ են, կամ ինչ պակաս տղերը են աշխարհ
բերել, մեծացրել», —ինչպես ինքնաբավական հայտա-
րարում են իրենք:

Դժբախտաբար, այս աշխարհայացքը, այս հոգե-
բանությունը գեռ զորեղ և գյուղում և շարունա-

Այս պիեսն առաջին անգամ թիֆլիկուս բեմագրվել և
Պետական Հայ Ակադեմիկ խումբը Ռուսթավելու թատ-
րոնում, 1923 թվի ապրիլի 25-ին, բեմագրությամբ՝
իս. Ալիքի Անդանի

ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐ

Սրբու	Փառական	Պահարի
Սալբի	Դիմուն	Սոֆիկ
Ամի Գիրքոր	Դիմուն	Սարդարյան
Գյուղական ուսուցիչ	Դիմուն	Մարության
Գլավին Քերոր	Դիմուն	Խորեն
Մելիսոն	Դիմուն	Բարյան
Ալու	Դիմուն	Փաղարյան
Ալմաստ	Դիմուն	Աննա-Մելիք
Ճուշիկ	Դիմուն	Մոնողյան
Բարթո	Դիմուն	Մուսույան
Խաչո	Դիմուն	Մուրադյան
Տիգրան	Դիմուն	Գալստյան
Վարդունի	Դիմուն	Ուշտունի
Մանուկ	Դիմուն	Պահարի II (Հուսիկ)

ՄԻ ԿՏՈՐ ՀՈՂԻ ՀԱՄԱՐ

Պիես Յ գուծ.—յերազգի՝ յերկու պատկերով

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Սովորական գյուղական տուն՝ յուր կանկարասիրով, մեջ տեղը քուրսին յերեք կողմից խալիչաներ փոած։ Սրբոն, ամի Դիրքորը, նստած բուրսուտակը իսկ վարժապետը յերըորդ կողմում՝ տարութեակի վրա խոսակցում են։ Սալքին տան մի կողմում ինոցի յի հարում, մի բրդունու հնտ, մերթ ընդ մերթ մասակցելով, խոսակցությանը։ Տան մի անկյունու կապած կամ մի բանի նորթեր, կամ գառներ, խոտը առաջներին։ Քորսոց մի փորք հեռու պատից կախված ե մի զոյզ սապոզներ, յերկրագործական գործիքներ, լիցին, գերանուկի յիշ այլն։ Տան մի կողմում դրվուծ են զութիկներ՝ վրան ծալքը յիշ մի շարք կավաւ առանեներ։ Մանակը լավաշ ու պանիր ե վերցնում յիշ տառելով վեզ խաղում։ ընկերոջը յերեմն համեցեր ե անում, յերքեմն ել նրա ուզելիս մերժում։

Տ Ե Ս Ի Լ 1.

ԱՄԻ ԳԻՒՅՈՒՆ, ՄՐՅԱ, ՍՍԼԱԲ, ՎԱՐԵԺԱԿԱՌ,
ՄԱՆՈՒԿ

ԱՐՔՈ. Ի՞նչ կուզեք ասեք, աղին վոր մարթ
պատիւպսափի չոլսակի՛, ի՞նչ համ ու լազաթ ունի.
Վոր քորփա-քորփա դարզի տակ չքցի՛, մեկ լայ
շխաժի, ել նրանից ի՞նչ գուրս կը գա...

ԱՄԻ ԳԻՒՅՈՒՐ. Ողորթ ա, ետենց ա, անեք,
ես գուզ քան տարի կը լինի, վոր յես քո վո-
ղորմած հորից բաժանվել եմ, իմ տղերը իմ
հառեջ հրլա-իսուս-Քրիստոս չեն արե. իմ կող-
մանէ, ասալված են մարթի թող տունը քանդա,
վոր ընդոնց թութուն քաշելուց բիլա տեսել ա.
իմ գեմ թամամ հարս են, ասեմ մեռեք՝ կը տեռ-
նեն, ապրեք՝ կապրեն...

ԱԱԼԲԻ. (Համեմատաբար ցածր ձայնով, թի-
թը ծածկելով): Հալբաթ վոր ետենց ա, ուռենին
վոր ուռենի ա, մինչի դալար չվնի, խո քթոց
չեն կանա գործի, եսպես ել իսանն ա:

ԱՐՔՈ. Տո ջանըմ, մեր սովորութենին սո-
վորութեն կը հասնի, ախալեր ջան, գնա դախըցի,
նոր պսակիփի, նոր աղեղ հընի, մեծանա, քեզի
պախա. թափու թափու, աչքս լուս...

ԱԱԼԲԻ. Ամի Գիւյորի ասածները ողորթ են,

մարդ վոր քառասուն տարեկան հասակին, մե-
դուժին թոռք-մոռ չունենա, ել ինչ... Զաթի
հոգին թող գուրս գա տղեքի, հարսների, թող
աշխատեն, ծնող պահեն: Ա՛խ, թե իմ հառչինեկ
տղեն սաղ կը մնար, թոռ ել կունենայի, ծոռ ել
կունենայի... Ա՛խ ինչ տաեմ, զրողի աշքերը
քոռներ...

ԱՐՔՈ. Ետ քո ասածները զլուխ կը գա Են
ժամանակ, վոր մարթ վախափին պսակի...

ԱՄԻ ԳԻՒՅՈՒՐ. Համա Մանուկի լավ լազա-
թին վախան ա. ել վոչ դես, վոչ դեն...

ԱԱԼԲԻ. Փառք աստծո, շատ ու քիչ գիր
զալամ զինա, իրա համար մե թեթի զուքան
կը բանա, լազաթին առուտուր կանա...

ԱՐՔՈ. Տո դուքանս վորն ա, բանս վորն ա,
ընչպարությունից ել լավ դախուզով բան կա...
Քեզի համար ջանավար զութանը լծա, մե տասը
որավար հող վարի ու ոեխտ լիքը ապրի... Կեր ել,
խմբ յել, ել նոր դես ու դեն ընդնիլը ի՞նչ ա...

ԱՄԻ ԳԻՒՅՈՒՐ. Տո ողորմի ձեր հորն, ետ
ինչ ա դուք, հալբաթ վոր ընչպարությունը...
հալա մեկ ել առա ընչպարություն... մարթ վոր
հողից չկշատանա, դալր քարու-կշեռքից կը կշատ-
նա... փառք աստծու, ամենքա ել լավ զինաք,

վոր աշխարհիս վրա ինչքան իսան, ջին ու ջանավար կա սազ ել հողից կը կշտանան...

ՄԱՆՈՒԿ. (Խոսակցության ժամանակ Մանուկը մի քիչ բուրսոց հեռու տան անկյունում վեզ և իշաղում ու հաճախ լավում՝ և՝ «Արի, կոճի ջան, արի» — կամ թե չեւ — «Ետ չելավ, նորից քցի»):

ՎԱՐԺԱՎՈՐԵՑ. Այ գարմանալի բան, ձեր ասածները վոչ միայն գարմացնում, այլ և վերին աստիճանի զայրացնում են. խոսք չկա իհարկե, յերբեմն ել սարսափեցնում... Այս ուղիղ յոթը տմիս ե, վոր յես ձեր ոդումն եմ ապրում, բնականաբար և բավականաշատի զաղափար ունեմ բնդիանրապես ձեր ժողովրդի, մասնավորապես ձեր ընտարիքի նիստ ու կացի և սովորությունների մասին... սակայն, կայացրած վճիռներից վատթարակույնը այսորվանն ե... Տեսեք, յես քանի անդամ առաջարկեցի, անդամ ինդրեցի մայրիկից, թե Մանուկին ավեք՝ յես պատրաստեմ, տանք Գեորգյան ձեմարտն, կամ Յերեմանի թեմական դպրոցը, կամ մի այլ դպրոց... Իհարկե, յերեխան առօղջ ե, կենսունակ, բնդունակ, ինչպես հատուկ և լեռնցիներին... բնականաբար ես յաթութ ամսվա բնթացքում բավականին բան կը սովորեցնելի... մինչզեռիմ բոլոր ասածները մնացին «Ճայն քառբառո անապատի»:

Հապա տեսեք, մի կտոր հողի համար ուղում եք անբաղացնել ձեր անմեղ յերեխային... Մարդկության լուսավորության այս պայծառ ժամերին, դուք կրկին ձեր հին եշն եք քշում, կարծելով, թե այս սարերից գենը ել ուրիշ աշխարհ չկա, մենակ դուք եք, ու դուք...

ՄԱԼՅԻ. Ա՛, հա, հա, յարաբ, այ նաչար ջան, դու վոր ես սարերից գենն ես զնացե հա, մի տեսանք ինչ ես զցել խախալի գլուխը... վառք տոտծու, ետ յաշիտ մի կնիկ ել չունես, վոր քեզ տերություն անի, յա ել հոգիտ տալուց, մի բուռը սեզ հող քցի երեսիդ...

ՄՄԻ ԳԻՐՔՈՐ. Մեզա քեզի, մեղա, տո տնածակի վարժապետ, դու յեքա Թիֆլիզա ջերմարան ավարտուկ մարթ, մազյար մինչի եսոր չես զինա, վոր սազ սալամ աշխարհը չե՞ վոր մի կտոր հողի համար հիրաբ կուտեն:

ՄՐԲՈ. Տո ամի ջան, ամի, մե են ողորմի քու անուշ հոր հոգուն, հլա մե հարցրու, աստ տես եե, են յեքա տերությունները չե՞ վոր մի կտոր հողի համար հագարավոր մարթի արյուն են թափում:

ՎԱՐԺԱՎՈՐԵՑ. Հա, հա, քիչ մնաց ձեզ տանեք, տերություններին հագասարացնեք:

ՄՐԲՈ. Տո վարժապետ ջան, չեմ զինա,

մեղի մարթա տեղ չես դնում, թե զաթի չես
հասկնում...

ՎԱՐԺԱՊԵՏ. Շատ լավ մարդատեղ եմ
դնում...

ՍՐԲՈՒ. Յա տնութեն, յա տերութեն, մեկ
բան ա: Յապոնի համար թանգ ամե Մանջուր,
ընծի համար ել մե Գոզալ-Դարի արտ... Տո
դուրբան քեզի, ուսուս յապոնի կռվին սարդաթ
յեղել եմ, իրա Մանջուրա մեջը ոխար հետ
իշակա բոյ յեմ գնացե մե կտոր հողի համար-
բառնք ամենը յես լավ գինամ:

ԱՄԻՒ ԳԻՐՔՈՐ. (Փոքը ինչ զայրացած):
Կվարժապետ ջան, ետ մե կտոր հող վոր ասում
ես հա, վոր գրուսար հարցուս, հող շինող ես
ձեռներս ա, ինչպես տօսում են՝ «Խաչին տերն ա
զորավոր անողը»: Հողը վոր կա, անասունի պես
մի բան ա, նրան պար ջան տաս, սիրուն, լավ
կշատացուս, վոր բանը բան նշանց տա...

ՍՐԲՈՒ. Դրուստ վոր, մինչ հողը շինում ես
ամի կտոր հող», ջանդ ել ա մաշվում, կյանքդ
ել հետը:

ԱՄԻՒ ԳԻՐՔՈՐ. Վարժապետ ջան, վարժա-
պետ, հիմա մեր ահագին արտերի մեջ, վոր
ոխան որ, ոխար գիշեր ման գաս, դեղի համար
մի բար չես քթնի. ետ ամենը ես ձեռներովս եմ

արել ե, այ տես, յարաբ մե սազլամ յեղունկ
ունէմ... (Ցուց ե տալիս ձեռքերը): Զե, վար-
ժապետ ջան, իմալ տենում եմ, գու քաղքցի յես,
ետ բաներից ենքան ել դատ չես հասկանում...

ՎԱՐԺԱՊԵՏ. Զեր ասելով՝ մի կտոր հողը,
կտմ ձեր մեկ արտը, քո Մանուկից թանգ ա:

ՍՐԲՈՒ. Հալլաթ վոր, հալալ քրաինքով ապ-
րող մարթի արտը իրանից ել թանգ ա:
Վարժապետ ջան, վոր լավ իմանաս, Մանուկին
Մանուկ դարձնողը—հենց ետ մի կտոր հողն ա,
վոր կա: 

ԱՄԻՒ ԳԻՐՔՈՐ. Տո, այ ջանըմ, այ գյոզըմ,
գու վոր կաս, քեզի համար հով, ոյարին ոթազ-
ների մեջ ջոչցած մարթ ես, հալլաթ վոր ես
թափուր բաներ քեզի համար խորթ կը թվան...

ՍՐԲՈՒ. Համա, տունը մերը, խոսքը մերը,
վարժապետ ջան, գու քանի տարեկան ես:

ՎԱՐԺ. Յես...

ԱՄԻՒ ԳԻՐՔՈՐ. Համա գնէ, հրամանքգ:
ՎԱՐԺ. ՅՕ տարեկան...

ԱՄԻՒ ԳԻՐՔՈՐ. Տես հալա, գու ՅՕ տարե-
կան մարթ, նոր պար պսակվես, նոր քո կնիկը
տղա բերի, նոր քո տղեն ել ջոչնա, քեզ քո
ծերության վախտը պահա, թափնւ, թափնւ:

ՍՐԲՈՒ. (Միջամտելով): Ամին զբուատ ա

ասում, քո թայեր մեր գեղ, հասուկ տղերք ունեն. ամեն մեկը մե համփա տուն են պահում:

ՎԱՐԺ. Դուք կարծում եք, ամուսնությունը հեշտ բան է, ի՞նչ:

ԱՄԻ. Գիրքնոր, Պատկվելը^o, պսակվելուց հետքտ բան: Վոր սուտ չասեմ ե, մե ամսվա մեջ հաղար տղա կը պսակեմ... Դու ծախոր, մրխոր տուր, տես, կը պսակեմ, թե չե...

ՎԱՐԺ. Ճշմարիտն ասացիր, մեկ ամսվա մեջ հաղար տղա կը պսակես. յես զբանում համոզած եմ և բնավ չեմ կասկածում. բայց Կ Մանուկի նման մանուկ պսակողները, իրանք մանուկից ել մանուկ են..

ԱՄԻ. Գիրքնոր. Տո տղա Սրբո, վոնց կերեա, մեր վարժապետը եսոր թարս ա քնե. մե սհաթվա մեջ ամենիս շնորհ մանուկ. ետ անունը ինչքան դուր ա եկել մեր վարժապետին...:

ՎԱՐԺ. Ե՛, մանուկ խոսքն ել չե՞ հասկանում...

ՍԲՔ. Հալլա, հալլա, մարթ ել իրան տղին չհասկնա, առ դու եա ի՞նչ ա կասես, վարժապետ ջան... չեմ դիսա...

ՎԱՐԺ. Վողորմելիներ, մանուկ յերեխա կը նշանակե...

ՍՐՔՈ. (Տաքացած): Բա Փիլիպոս ինչ կը նշանակե:

ԱՄԻ Գիրքնոր. Յես նոր գլխի ընգա. ոռ քաֆրի տղա, դու յեքա մհալի իշխան Սրբոյին յերեխա յես դարձնում:

ՎԱՐԺ. (Մի ըիշ այլայլված): Միթե պարզ չէ, ի՞նչ...

ԱՄԻ Գիրքնոր. Վալլա, քո պարզն ու ամբը յես չեմ հասկանում: Տո տղա Սրբո, դու բան կը հասկնամ:

ՍՐՔՈ. Տո ամի ջան, մեր վարժապետը փոտեն գլուխ ամբ ա ու կա:


ՎԱՐԺ. Ախը սրտին գիտչելու բաներ եք անում ու ասում, բարեկամներ:

ԱՄԻ Գիրքնոր. Տնակերներ, ինչ հելավ ձեզի, ես թափուր խոսելով, քիչ մնաց աշխարհից դուրս գանք:

ՍՐՔՈ. Թամամ վոր ետենց ա...

ԱՄԻ Գիրքնոր. Ողորմի են հորդ, վարժապետ, մե մեր լեզվով պարզ խոսա, վոր բան հասկնանք...

ՎԱՐԺ. Այստեղ պարզի, բարդի բան չկա: Բանը նրանումն է, վոր դուք ձեր յերեխայի վերաբերյալ պատրաստվում եք այնպիսի վճիռ արձակել, վորպիսին հետարձակի, ամենածանր



հանցանքի համար, վոչ դաշտային և վոչ ել զին-
պորական առյանները:

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Առյանը վ՞րն ա:

ՎԱՐԺ. Այսինքն սուղ:

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Սուղ:

ՎԱՐԺ. Այս, սուղ...

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. (Դիմում ե Սրբոյին, Սալ-
քոն), Տհ, դուք ըլեք ձեր հոգին, դուք բան
հասկացածք...

ՄՐՔՈ. Հասկացածներս ել մոռացանք:

ՍԱԼԲԻ. (Հեզանիպով): Զաթի շատ ուսում
առուկ մարթիք մե թափուր են հընում... (Հա-
մոզված ձեվով):

ՄԱՆՈՒԿ. (Խանգարում ե խոսակցությունը
լալագին բողոքնելով): Զեմ, հը՛, Սարոն կոճիքո-
առավ, չի տալիս, չեմ, հը...

ՄՐՔՈ. Շան լակոտներ, դուս դնացեք, խա-
ղացեք ելի, ինչ ըլավ ձեզ: Հ

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. (Դիմում ե վարժապետին):
Ախպեր ջան, մենք չե՛ դու, իմալ հասկնանք.
ինչ վոր դուզ ա, դուզ, պտի ասեմ. մենք ըս-
տեղ հարսանիքի ուրախության մասին ենք խո-
սում, իսկ դու առանց կովի ետ սուրբ գործը
տարար, հասցըիր ողի դոներ. են ել վորը կը-
հասկնա հանդի սուղ, սարի սուղ... ողորթ ա,
մենք լսողաց ենք, մե հազար անգամ լսած կանք,

վոր սարի թոփ ել կա, հանդի յել, համա իմ
կողմանե թող խլանա են մարթի անգամը, վոր
լսած կա, թե ետ թափուր սգեր կան աշխարքիս
մեջ: Ուր մնաց, վոր թամամ ոխտը տարի սու-
դություն եմ արե մեր դատարանի մեջ:

ՄՐՔՈ. Ողորթ ա, ետմալ ա:

ՎԱՐԺ. Յես ավելին կասեմ. կասկածից
դուրս ե մի բան, վոր դուք վճռել եք, հավի-
տյան անբախտացնել, յեթե կուզեք իմանալ, ուղ-
դակի սպանել ձեր յերեխային:

ՄՐՔՈ. Այ, հայ, նալլաթ քեզի չար սա-
տանա. ես յուրդաքանդ վարժապետը ընձի վոր-
թեսպան շինեց:

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Մեղա քեզի, տեսեք ե, աշ-
խարքիս բանն ե: Մեկը չկա ասի, տո խեղճ
սըքո, դու քո ետ յաշիտ մեջ, եշին չոշ ասած
կամ, վոր մարդասպան ել դառար:

ՍԱԼԲԻ. Տնավերներ, թամամ բաբիլոն շի-
նիք, ելողին վոր ես ամենը լսա, ջանդակներիդ
կը թքա...

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Վարժապետ, ետենց չե...

ՎԱՐԺ. Ել ետենց-մետենց չկա: Ապա մի
լավ նայեցեք, ձեր փեսացուն, ձեր աշքի առաջ
կոճի յե խաղում. դուք դատեցեք խոճի մտոք,
այդ յերեխան կարսղ ե արդյոք 18 տարեկան
աղջկան ամուսին լինել... Խեղճ աղջիկ...

ՍՐՅՈ. Հիմա յել աղջկան խղճաց...
 ՍԱԼԲԻ. Ինչ դդա խղճով մարթ ա ելել մեր
 վարժապետը...
 ՎԱՐԺ. Այս, մայրիկ ջան, հենց այդ իմ
 խիղճն ե, վոր ստիպում ե ինձ, այսափ տաք
 խոսել այս գործի մեջ: Այդ միևնույն ե, վոր
 կանաչ արտը հնձես, կամ թե չհասած, դեռ
 նոր կոկոնած ծիրանն ուտես, թե միրդ ես
 ուտում:

ՍԱԼԲԻ. Տնաշենի վարժապետ, իմ յեքա
 շինար Մանուկին տանում, անում ես շխասուկ
 ծիրանի թայ: Բա, վոր դու դառել ես լիսկուկ
 ծիրան, ինչ ա, ա, ուզում ես իմ տղին, ելքոնման
 լոկցուս...

ԱՄԻ ԳԻՐՅՈՐ. Այ ջանըմ, հնչի ետքան
 ջուր կը ծեծեք: Վարժապետին դրկել են ըս-
 տեղ, վոր քորփա երեխանցը բան սովորցնի, իսկ
 իմ նման մարթից թող ինքը բան սովորի: Ե՛, Ե՛,
 ես հասակիս ենքան վարժապետ եմ ճամփու
 դրել վնր...

ՍՐՅՈ. Վարժապետ, բանն ըսենց ա, իմալ
 տենում ենք, դու մեր կյանքից ենքան ել բան
 չես հասկանում: Մենք մեր բանը գինանք, են ել
 լավ: Բանա, վոր թոռս ուսում առնի, թող ընի
 հարիր տարեկան, նոր պսակվի, ետ ել իրան
 բանն ա...

ԱԱԼԲԻ. Հալբաթ, վոր ետենց մերեն
 մենք գեղացի անհիմար մարթիք ենք: Մեր յեքա
 մհալի մեջ մե երկու հատ քոսոտ, մոսոտ շկոլ
 կա, կասես են բաղդավոր Աշտարակն ա, ուր 20
 ջուռա շկոլ կա, ել թագավորական, ել ծխական,
 ել սելսկո-խազեյնական. իմ գինալով, ամեն գեղ
 պտի մե հատ շկոլ ունենա, վոր բանից բան
 դուռս գա... են ել վորը գինա, յերբ...

ԱՄԻ ԳԻՐՅՈՐ. Սալբի, ետ ի՞նչ ա, բիլբուլ
 ես դառել, ետ ինչ ետ ա, մե քիչ ալուր քսա
 երեսիդ, թամամ քաղկենի կը լնես. դե վոր մենք
 ամենքս ել ուսում առնենք հա, բաս ով աշ-
 խարքին կը կշացնի: «Յես աղա, դու աղա, բա
 մեր աղանն ով աղա»: Բոլ ա, ջանըմ, բոլ ա,
 դարդակ ջուր ծեծենք. նաղդի խոսանք: Ասեք
 տենանք, ումն ուղարկենք աղջիկ ուղելու. վոնց
 վոր գիտեք, աղջկան հաղար ուղող ա գնացել,
 համա անիրավ հերը—Ալոն ամենքին ել քարի յա
 գարկել: Հնչի չե, զինքը հարուստ կը ակի
 տեր, աղջիկն ել խորոտ՝ կաքավի կտոր, աբու-
 ռով ու նամուսատեր... Սաղ աշխարքն ընդրա
 գովքն ա, անում... (Ներս ե մտնում ծառ և
 ԽԱՉՈՆ, վորը վերադառնութ և դաշտից—արար
 վարելուց... արորի խոփը շղթան ուսին զգած,
 խորչինի պես):

S E U H L 2.

ՆՈԽԵԿԱՔ յԵՎ ԽԱԶՈՒ

ԽԱԶՈՒ. Բարի աշողում ձեզ...

ՆՍՏՈՂՆԵՐ. Վայ ասոծու խերն ու բարին
քեզ...

ՍՐՅՈՒ. Հը, Խաչո ջան, արտը վարելուց
պլրծար, թե չե...

ԽԱԶՈՒ. (ԽԵՂՋԱԳԱԾ, ԳԼՈՒԽԱԾ ԹՈՐԵԼՈՎ): Աղա
ամի ջան, պլրծնելը պլրծա, համա են եշն ել
գնաց արտի ողուրին:

ՍՈԼԲԻ. (Ցած ծայնով): Վայ, քու խաբարը
քու գլուխն ուտի, հա...

ՍՐՅՈՒ. (ԱՅԼԱՄՎԱԾ): Այ աղա, մի ասա տե-
նանք, վո՞նց թե եշը արտի ողուրին գնաց...

ԽԱԶՈՒ. (ԽԵՂՋԱԳԱԾ ծայնով): Տո աղա ամի
ջան, հոտաղի հետ, իրիկվա են հովին, են վախտը,
վոր Ալագյազաք քամին անուշ, անուշ, շնդշնդալով
փշում եր, մենք ել խաղ ասելով՝ մեր վարն ինք
անում... եշն ել մեզնից մե քիչ հեռու, ծաղիկ-
ների մեջ, իրա խամար արածում եր, թափալվում
եր, քեֆ եր քաշում...

ՍՐՅՈՒ. (Բարկացած): ԴԵ, շնւտ, շնւտ
պատմի, ինչ ես գլխիս ճառ կարդում:

ՎԱՅԺ. (Դիմում ե Սըքոյին): Այստեղ բար-
կանալու միանգամայն կարիք չկա, թող մարդը
իշուուղիչների ձեռվ պատմի, վորպեսզի կանո-
նավոր գաղափար կազմենք եշի անհայտանալու
մասին... (Դիմում ե Խաշոյին): Հետո, հետո,
ապա, Խաչո, ապա...

ԽԱԶՈՒ. Հետոն են ա, վոր վարժապետ ջան,
մեկ ել տեսանք, վոր եշը չկա... գես վազեցի,
դեն վազեցի, հասա Սալով աղբը մոտի են ջնջ
քարը...

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Ախը, վո՞ր քարն ե...

ԽԱԶՈՒ. Ե՞ն ծուռ քարը հա, ինչ վոր ասում
են, տակը խասինա կա... են ա, են, պտի լավ
մոտինի, քարին... աչքերս բաց անեմ, ինչ տե-
նամ, զուլում կրակ... եշս վոտները փոե, աչ-
քերն ել չոե, գելն ել իրա խամար արխային
նստե, բառբառելով ճաշակում ա... են ասոծու
խերն ու բարին ձեր գլխին, սեն ու սուզը Խա-
չոյի դլխին... ան ու զարզանդը կոխեց ինձի...
Հարաքյաթ արի, թոքն ու պլոճիկս հավաքեցի,
մի քանի դան թուք կուլ տվի, թաղաղան աչ-
քերս բացեմ, ինչ տենամ. ✎ մեկն հելավիազար ..
յերգնի աստղերին հաշիվ կա, գելերին ել հաշիվ
չկա. յես ասեմ խարիս, դու ասա խազար... ասի,
այ հայ, ես ինչ ես ա, յես ել շուտով եշի որին
կընդնեմ... Դը զիդի Խաչո, վախոսով հտուշ

ճղա... Մեկ ել, աստված կյանք տա չոբաններին,
հավարիս հասան, մե խազար դան գյուլա քցին,
մեկ ել մոտեցանք, ի՞նչ տեսանք... «թե եշ դըել
ես, արի տար» գելի ալրոջ տունն ավիրվի, գու
մի ասա, եշին քցե քաշ, մեզի թողե մինակ խաշ:

ՍՐՅՈ. Վալլա լավ զներ, իմ եշի տեղ գելն
քեզի ուտեր, Խաչո: *

ԱՄԻ ԳԻՐՔՈՒՐ. Դրուստ ա, հուրիշ յերգըր-
ների իշվանքից չեր, իսկը Համադանա եշ եր,
հազար ձի արժեր...

ՎԱՐԺ. Այո, յես լավ գիտեմ, նա շատ պատ-
վական եշ եր...

ՍՐՅՈ. Հալբաթ վոր, պատվով եշ եր, քահ-
լան եշ եր... իւաքի ճամփա եթալու համար
թառլան զուշ եր...

ԽԱԶՈ. Զախորդության ալրոջ տունն ա-
վիրի... առավոտ վար եթալուց, հըլա չըխասած
բերթի քարեր, մե բեղողուր լապստրակ վոտնե-
րիս տկեն թուավ, ըտեղ հասկացա, վոր աջողու-
թյուններս կորավ... հրա լավ եր, վոր ետ փոր-
ձանքն եկավ եշի գլխին, բա վոր գար վըր ոջա-
խին:

ԱՄԻ ԳԻՐՔՈՒՐ. Խաչոյի ասածը ողորթ ա,
Սրբո ջան: Փառք առւր աստծուն, վոր լոպսարա-
կի ձեռից եշով պըծար... լապստրակից ել անո-
դուր բան վայ թե աշխարիս մեջ սկի չկա...

որհնված աղվեսն ա, վոր տեսար թե չե, գնա
գիտցի, վոր կնկանդ բերածը մախսուս տղա յա:

ՍԱԼԲԻ. (Դիմում և Սրբոյին): Այ ջանըմ,
բոլա, բոլ խեղճ իշի ճակատին ել հալբաթ ետ եր
գրուկ... բան չկա, Մանուկս սաղ ըլնի. ամի
Գիրքորի ասածի պես, ասեք տենանք, վիրն
զրգենք աղջկան ուզելու: .

ՍՐՅՈ. Ամի ջան, ամի, ննչի, գու չես գիրի,
վոր զինսըզի ճախից իմանսըզը կը գա. յես ըտրա
դեղն ել գիտեմ, մերը չը մեռնի Սրբոյի. յես
գիտեմ, Բաշոն վորտեղից ջուր կըխմա. յավաշ
հալա մե զլամին բերոբը ընդրա տունը վոտ
դնա, տես ետ բանը են սհաթը. զլուխ կը դա,
թե չե...

ՍԱԼԲԻ. Մեղա քեզի, մեղա, վոր ըտենց ա,
մենք մարդ ու կնիկ մեկ տեղ պլտի մեռնենք:
Գլավին բերոբը են ա, իմ լեզվի ծիրին եր, պտի
ասի, գու վրա բերիր...

ԱՄԻ ԳԻՐՔՈՒՐ. Այ, ինչ եմ ասե, այ խելք,
այ միտք—զլավին բերոբ: Հալա մեկ ել ասա՝
զլավին բերոբ: Թոսոտ Ալոն վոր ընդրան ել
մերժա, ասա, աշխարքը պտի քանդվի ելի...

ՎԱՐԺ. (Հուզված): Ուրեմն ձեր զլավին
ասածը ամենազոր ե, նա անհնարինը հնարավոր
կը դարձնի... ուրիշ խոսքով, բանը թիյակ կը շի-

Նի... Ուրեմն Ալոն նրա խաթրին պատրաստ կը լինի իրա աղջկան զոհելու:

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Տո խելոք, (դիմում և վարժապետին) գլավին-Քերոբը, վոչ թե մենակ բահը թիյակ կը շենի, այլ ուրեմն, յեթե ուղենա, բահը գութան ել կը շինի... Գլավին Քերոբը լայեղ անի, նրա տունը վոտը դնի, ճա, վայ թե Ալոն իրա տղին ել մատաղ անի... են ել ուր մնաց, վոր, իմ գինալով՝ ախչիկը կա, թամամ թաց մայայ յա, ախչկա հելածն ինչ ա...

ՍՐՔՈ. Հալբաթ վոր ետենց ա, աղջկա ոքուտն ինչ ա...

ՎԱՐԺ. Հետո... հետո...

ՍՐՔՈ. Տո վարժապետ ջան, ինչ կը խոսան. պրիստավը վոր պրիստավ ա, առանց գլավին-Քերոբի վոտ չփոխա, մարթի ուղենա հոքով մարմնով կը կորցու. համա վոր մտքին ել դնի, մարթասպանին ել չիստի կազատա... ուր մնաց, վոր գիտնակ ել ա, իրա պրատակոների տակ ել շատ վախտ ոսեվար ձեռ կքաշա...

ՍԱԼԲԻ. (Ճածր ձայնով): Թառւ, թառւ, սադ Կավկազ գլավին Քերոփի թարիֆ կանա, համ մեր խեղճ վարժապետը զատ չը գինա... թող հալա մէ հաջողվի գլավին Քերոփը ընդրա տուն վոտ դնա, կը տենաք, վոր ուրախությու-

նից, ընդրա սիրտը կը թոթոա. հոգի ունի, վոր մերժա, վորթեց վորթի կը կորի...

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Մերը մեռնի գլավին Քերոփի, նրա ասածը հըլա թող գետին քցող ըլնի, կը տենա, թե գլուխը ինչ ողբաթ կբերի. հավատա, վոր մի ենենց բան կը հնարի, վոր դիմացնի յերկու աշբը մի բնով հանի...;

ՍԱԼԲԻ. Խելքիդ մեռնեմ, այ սարթ. են ա, լավ ես քթել: Գնա գլավին աղաչանք - պաղատանք արա, գնացեք նշանը գըեք, թող մեր զավակին բախտավորացնենք, նոր մեռնենք:

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Ողորթ ա, մարթս, պաի երկաթը տաք տաք ծեծի, վոր ուզածիս պես ծռա...

ՎԱՐԺ. Քիչ մնաց, վոր հասարակ գյուղական գլափուն յերկինք հանեք:

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Հասարակը վոր գլավին Քերոփին ա, բա մեր յերգի իշխանը վորն ա, բա մեր յեքա ժողովրթի տերը ու տիրականը վորն ա...

ՍՐՔՈ. (Ժպտալով, հանաքի ձեվով): Զիրնի թե, վարժապետ ջան, դու յես:

ՎԱՐԺ. (Կիսանեղանալով): Ասացեք, ասացեք, յես լոռւմ եմ, այդ բոլորը հին ցավեր են: Յես կրկին ասում եմ, չեմ նեղանում և չեմ ել նեղանա...

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Ի՞նչ հին ցավ, ի՞նչ նոր ցավ,
ախպեր ջան, մեկ ել որս մեր գեղացի մեկը
Յերեվանից գալուց զը հընի, իրա աշքով կը տենա,
ի՞նչ կըտենա. Են ամենամեծ դիվանխանի մեջ,
ես մեր զավի Քերոփը իրա նաշառնըկի հետ,
թե-թեկի տվուկ, բոլթա կտին, բոլթա, ի՞նչ բոլթա,
սապոկի ճռոցը վայ թե համեր Ստամբուլ...
Խեղճ կրակ վարժապետ ջան, ի՞նչ ես կորցրել,
ի՞նչի յետեկից ես ընգել...

ՍԱԼԲԻ. (Քիթը ծածկած, զլովսը շարժելով,
ցածը ձայնով, իրեն, իրեն ասում). **Փառքիտ**
մեռնեմ թանապուր, դու յել դառար կերակուր...
Ես խեղճ կրակ վարժապետն իրա հալով ել չի
մում, թաքավորի նման մարթին ել չի հավա-
նում:

ՎԱՐԺ. (Հսելով Սալբու ասածները): Ասա-
ցեք, ասացեք, յես այդ բոլորը կը տանեմ...
Քարի շրջանի մարդիք եք դուք:

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Այ, ողորմի քու հորը,
ետենց ա, մենք քարքարոտ յերկրի մարթիք ենք,
վարժապետ ջան: Մենք լավ դիտենք, վոր մե-
զանից չես նեղանա: Մենք իրար հետ աղ ու
հաց ուտող մարթիք ենք, միսն ուտենք, ոսկուր
չենք քցի, ըտրա համար ել ինչ դուզն ա, են
կասենք... (Փոքը ինչ լրումյունից հետո): Ետ
անիրավը ուրիշ բան ա, դիտես...

ՎԱՐԺ. Ի՞նչ անիրավ:

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Դլավին Քերոփը, դիտնակ
ելա, գինաս, շատ գիտնակա...

ՍՐԲՈ. Հալբաթ վոր, հուր ա մեր Կավկազ
ընդրա նման ուռուսավար խոսող. Են վախտ, վոր
մեծավորների հետ ուռուսավար կը ջարթա, ինչ
վոր կարկուտ խըռուա... ոխան որ չուտես,
չխմես, անզաճ անես. համա ինչ անես, դու բէ,
վոր զատ չեմ հասկանում: Գըլոփիդ ինչ ցավցնեմ,
ինչ վոր Արաբստանա ձին զանգուլամիշ անես,
ջիլավս ել թողնես...

ՎԱՐԺ. Ախ, այդ բոլորը յես հասկանում եմ,
լավ եմ հասկանում, սակայն վորից սիրտս կըս-
կըծում ե, հոգիս ձմլվում:

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Ճըմլվելն ի՞նչ ա...

ՎԱՐԺ. Այսինքն՝ ցավում:

ԱՄԻ ԳԻՐՔ. Մագյար ընչի, դու ցավա-
գյաղ յես... մարթի սիրտ ել ես թափուր քաղցր
խոսքերից ցավա. վալա, մենք ոխտը ամիս
ձմեռը ես թափուր բաներով ենք հալցնում...

ՍԱԼԲԻ. (Ցածը ձայնով դիմում ե ամու-
նուն): Այ ջանըմ, զյողըմ, իընչի յեք ետքան
անտեղի չանա տալի ետ վարժապետի հետ: Դրա
ասածներն ինձ մոտ՝ կուկուն սծի, պուպուն
տանի...

ՎԱՐԺ. (Գրգոված): Այ, այ, յես ձեզ վրա
վոչ թե բարկանում, այլ ուղղակի ցավում եմ,
վորովհետև ձեր տղիտության ու խավարա-
մտությանը չափ ու սահման չկա...

ԱՄԻ ԳԻՐՔ. Հընչի յես ըտեսց զայրանում,
վարժապետ ջան:

ՎԱՐԺ. Ինչպես չը զայրանամ. քիչ մնաց,
յերկինք հանեք մի զլավու, վորի խիղճը իրա
ոգուտն ե, իսկ այժմ ել իր փառամոլության
համար, շնորհիվ իր դերքի՝ պիտի անբախտացնե
Մանուկին ու են խեղճ աղջկանը: Ուրիշ բան ե,
յեթե ձեր գովարանած զլավեն լիներ անկաշառ
։ հասարակական շահերը պաշտպանող, ձեր լավ
մարդկանցից մեկը, այլ բան, սակայն փաստերը
այլ յեն ասում...

ԱՄԻ ԳԻՐՔ. Տո վարժապետ ջան, չեմ
գինա, թե դու ետ ինչ կասես: Տո, դատավորը
վոր զոռքա կաշառակեր չնի, ինչ համ ու լա-
զաթ ունի, գործ տեղից իրար կը գա: խելքա,
յերգիր յոլա կերթա: Նոր դու եկել ես ամի Գիր-
քորին բան կը սովորցուս, գլուխը չմեռնի ամի
Գիրքորի... յես ել մի տարի քյոխվա հելա. համը
իմացա, համա թող սարաբի տունը քանդվի,
չթողեց զորտնայի...

ՍՐՔՈ. Ամի ջան, դե ասա տենանք, ինչ
անենք:

ԱՄԻ ԳԻՐՔ. Ի՞նչ անենք, բոլ ա, ախի-ախի
խոսաք. վեր կաց, անսաս գնա, զլավսի Քերոփի
ձեռը, վոտը պաչի, տար, դուշման քոռացրու,
ետ բանը զլոխ բեր...

ՍՐՔՈ. (Դիմում ե վարժապետին): Դու յել
չեմ գա, վարժապետ ջան...

ՎԱՐԺ. Քավ լիցի:

ԱՄԻ ԳԻՐՔ. Քո բանն, ա, քո աղա կամքը
գինա, կուզես գնա, կուզես մի գնա: (Սրբոն
կամաց, կամաց պատրաստվում ե գնալ):

ՍՍԼԲԻ. Դեհ, բարի սհաթ հընի, դե գնա
(Սրբոն գնում ե):

ՏԵՍԱԿ 3.

ՆՈՒՅՆԱ, Ա.Ռ.Ա.Ց ՄՐԳՈՅ

ԱՄԻ ԳԻՐՔ. Վարժապետ ջան, գնանք ողեն,
մե քիչ ել աշխարքի խեր ու շառից խոսանք:
(Դուզս են գնում):

ՏԵՍԻԿ 4.

ՆՈԽԵՆՔ ՅԵՎ ՄՐՎԱ

(Սրբոն ճանապարհի կեսից յետ և դառնում տուն):

ՍՐԲՈ. Հա, սղորթ, Սալբի ջան, բան ա, թե ես բանը գլուխ եկավ, մախսուս աթլաս դեյրեա կը հաքնես, նոր կը գաս.

ՍԱԼԲԻ. Տո, ետ բանը թող գլուխ գա, աթլաս դեյրես ել կհաքնեմ, մարինես ել կըքցեմ, հըլա սաղբի սոլերս ել կհաքնեմ: Բա մասխարություն ա, տղա յեմ կարքում, ոչախ եմ սարքում...

ՍՐԲՈ. Դեհ, Սալբի ջան, սապոկներս ու մահուդ չուխես տուր: (Սալբին սապոկները պատից իջեցնում են յեվ գոզնոցով. սրբում, տալիս են մարթուն ու հազնվելիս ոզնում): Այ կնիկ ջան, յես գնացի...

ԿԱՐԱԴՈՒՅՐ

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Աղջկա հայր ԱԼՈՅԻ տունը, մի կողմը, զեղեցիկ խալիշաներով զարդարված թախտին, ԳԼԱՎՀԻՆ ՋԵՐՈԲՀ բազմած, մի քանի բարձերի վրա. նրանից ցածր ՍՐԲՈՆ, նստած ե տաքուրետկի վրա, իսկ ԱԼՈՆ՝ բավականին հեռու հատակին փռած խալիշին: Նստած են ԱԼՄԱՍՑԼ յեվ տղա ԲԱՐԹՈՆ. ՇՈՒՇԻԿ ամբողջ ժամանակ մոր կողքին՝ զլուխը կախ կանգնած ե. դուն մոտ, փոքր ինչ հեռու պատին հենված ե ԳԼԱՎՈՒ ՅԱՍԱՎՈՒԼՅ, իրացանը ոսին:

ՏԵՍԻԿ 1.

ԳԼԱՎԻՆ ՔԵՐՈՐ, ՄՐՎԱ, ԱԼՈ, ՍԼ.ՄԱՍ, ՇՈՒՇԻԿ, ԲԱՐԹՈՆ յեվ ՅԱՍԱՎՈՒԼՅ,

ԱԼՈ. Հը՝, վժնց եք, լմվ եք, գլավին աղա: ԳԼԱՎԻՆ ՔԵՐՈՐ. Շնորհակալ եմ, լավ, համագու արի տես, վոր գանգատավորի ձեռից աչք չեմ բացում:

ԱԼՈ. Բա, ժողովուրդ ա, ետենց կըլինի, բա ահազին, մհալին կառավարելը հեշտ բան զիտե՞ս, ինչ:

ՍՐՅՈ. Քերոփի աղա, քո ձեռքն ա, վոր ժողովութիւնը կը կառավարես, զիտես:

ԱԼՈ. Հալբաթ վոր. Քերոփի աղի զառքը չըւներ հա, աշխարհն իրար կուտեյին, շունը տերը չեր ճանաչի:

ԲԱՐԹՈ. (Խոսնելու ժամանակ կանգնած ե): Ամեն բան լավ ա: Յերկար կյանք հնես, համամեր ետ սարերն ել՝ թե ետ անիրավ քրդերի ձեռքից տուար, են վախաը լազաթ կը տա: Ել ուրիշ պակասություն չունենք:

ՍՐՅՈ. Ճշմարիտ ա. ետ անիրավները սաւրերում մեզ շատ նեղություն են տալում:

ԳԼԱՎԻՆ ՔԵՐՈԲ. Տո, զուք քեփներդ քոք պահեք, թե մե տասը տարի յել զլավին կընորեք, մի քրդի փափախ ել չեք տեսնի մեր սաւրերում:

ՍՐՅՈ. Քո զլուխը սաղ ըլնի, ինչ ուղենաս, վոր չես անի: Թորփախ յերանալ քո ձեռի մեջ, կոսկերնատ քու մարթ, զաթի ակենթ մակենթ, պրիստավ, մրիստավ գիփի քոնն են ու կամ:

ԱԼՈ. Հալբաթ վոր, իրա զլուխը թող սաղ ըլնի, մեղնից անպակաս ընի, մինչև Դաղստան, Արարատուն ել երթառ, ասես զլավին Քերոփի մարթն եմ, քեզի սուրբ-սուրբ կանեն:

ԲԱՐԹՈ. Ճշմարիտ ա, ետենց ա. մեկել որս Գյումրուտ զոլուց՝ Կողաթ գեղի մեջ մեռանք

սրա նրա զուոր ման գալուց՝ անուն մարթ մեզի ներս չառավ: Մեկ ել, ձեզնից լայլ շըլինի, են կողմից մի իշխան մարթ զուս եկավ, ասաց. արդերք ջան, վորտեղացի յեք. ասինք, զլավին Քերոփի յերկրից: Ախակեր ջան, ես բանը վոր իմացան, մեզի հրամեցեք արին, տարան իրանց ողեն: Ողա, ինչ ողա, մե սե ահազին վանք, ել ուտել, ել խմել, ել չայ, ել ֆունչ, ել յորդան, ել դոշակ, որն ասեմ:

ՍՐՅՈ. Յերկար կյանք հնի. խոսքը մարդիս տերն ա, ըստեղ են ասե. տերովին տերն ե կերե, անտերին գելլ:

ԳԼԱՎԻՆ ՔԵՐՈԲ. (Ռուած ու փքված): Գովասանք չըլնի, ինչ Դաղստան, ինչ Արարատան, ինձի ձանաչելը զնա Ղազախ, Բորչալու թուրքերի մեջ:

ՍՐՅՈ. Ա-, ողորմի հորդ, խոսքդ հալա մեկ շաքարով կտրա: Քերոփի աղա, մեկել տարին յես զնացի թուրքերի մեջ, պանիր առնելու: Ղաչաղ եմինի տղեն քեզի շատ սիրով և կարստով բորե եր անում:

ԳԼԱՎ. ՔԵՐՈԲ. Հը, ինձի աշխարք կը ճանչնա, ինձի անուն հողը ծնած ինսան հլա չի մերժե, թե Ալոն մերժի, աշխարքի մեջ խայտառակի, ես չեմ զբարի:

ԱԼՈ. Վայ, չե, իմ կողմանի թող են մարթի տունը քանդիվ, ով վոր՝ վոչ թե քեզ կը սերժե,

այլ խոսքիտ վըեն խոսք կը բերի. մենակ թե,
մարթի ձեռից զա:

ԳԼԱՎԻՆ ՔԵՐՈԲ. Պարծանք չլի. ամենքդ
ել լավ զինաք, վոր ինչտեղ բարեգործական խե-
րով բան, ձեր զլավին Քերոբն ել ենաեղ: Ալո
յեղբայր, քեզնից պահեմ, աստծուց ինչ պահեմ:
Ես ավուր որը, յես զանգատավորներին թողել եմ
անտեր, անտիրական, յեկել եմ յերկու ծաղիկ-
ներու բախտավորության համար. քո ծաղիկ
Շուշիկին ուզելու Սրբոյի ջահել-ջիվան Մասու-
կին: ✕

ԱԼՈ. Վայ իմ գլխին, վայ իմ երեսին, իմ
տուն տեղ, քեզի փեշքեց, իմ աղջիկն ել քեզ
զուրբան. թայու, թայու, յես Ալոն եմ, յես աշ-
խարքի մեջ բան կը հասկնամ, մարդ կը ճանչը-
նամ: Յես մեծավորի հետ նստած, կանգնած մարթ
եմ. յես իշխանավորի պատիմն ել դինամ, նոքա-
րին ել: Տես, Քերոփ աղա, անուն ինսան, վոր
իրա տեղից իրար եկավ, յես կը հասկնամ, թե,
ինչի՞ համար ա, յա թե չե՞ նրա մտքին ինչ կա.
հալա գանեն չմտած, յես ձեր մտքինը հասկացա:
(Դիմում ե կնոջը): Ետենց չե, Բարեյի աղջիկ:
(Դիմում պիսի շարժումնվ համածայնվում ե): Համա-
ետ բանի համար մի թեթև սովեթ կանեմ պա-
ռավիո հետ, նոր ձեզ պատասխան կտամ:

ԳԼԱՎԻՆ ՔԵՐՈԲ. Ետ քո բանն ա, համա զի-
տես պապական առակը ինչ ե ասում. ինչ
զոր ուզում ես անել, սիֆթա կնգանդ հետ մաս-
լահաթ արա. լսի, տես, թե կնիկդ ինչ կասի,
հակառակն արա, անպատճառ հաջող կը լինի
գործդ: (Դիմում ե Ալմաստին): Ալմաստ քույրիկ,
եսենց ա: (Ալմաստը բիթը ծածկելով, թեթեվ
ժպտում ե, ներս ե մտնու Մելիտոնը, ծեռքին
ծրաբներ):

ՏԵՍԻԼ 2.

ՆՈԽԵԿ ՅԵՎ, ՄԵԼԻՏՈՆ

ԳԼԱՎ. ՔԵՐՈԲ. Հը, ինչ կա, Մելիտոն:
ՄԵԼԻՏՈՆ. Սկի, Աղա ջան, յեկտրեննի
թուղթ կա նաշանիկիցը: (Տալիս ե ծրաբները):

ԳԼԱՎ. ՔԵՐՈԲ. Ես լավ ելավ, մենք Սրբոյի
հետ կերթանք ողեն, յես իմ յեքստրեննի փակեթ-
ները կը կարդամ, տեսամ, ինչ կը դրեն: Ետ ժա-
մանակ դու մասլահաթ արա քույրիկ Ալմաստի
հետ, իրաբար արա, մենք ողից կը գանք:

ԱԼՈ. Ետ լավ ասիր, զաթի ողեն սարք, իւա-
լիչեք փռած, մաքուր, իսպահի, հրամեցեք, հրա-
մեցեք (Քերոբը, Մելիտոնը յեվ Սրբոն զնում
են):

ՏԵՍԻ ՅԵՒԹՈՒՅ

ԱԼՈ, ԱԼՄԱՍՏ, ԸՆՐԹՈ, ՇՈՒՇԵՒ

ԱԼՈ. Ե՛, Բարեյի աղջիկ, ասա տեհանք,
միտքտ ի՞նչ ա, իս խելքով ես բանը գլուխ գալու
բան ա:

ԱԼՄԱՍՏ. Վ՞նց թե գլուխ գալու բան ա, ես
ի՞նչ ես ասում, չեմ հասկանում։ Առաջին, վոր
տղեն մեկ մատ թփիլ ա, իսկ քո աղջիկը 18 տա-
րեկան, չումքի կարկտի տարին ե ծնվել. են
ժամանակ, վոր ցորենի խալվարը ելավ հարիր
մանեթ։ Մեկ ել վոր, քանի, քանի, լավ, լավ
տղերք եկան ուզելու, հայդէ արիր, իսկ հիմքի
միտք ունես, տաս Սրբոյի զրկանոցին, վոր են ա,
ժամի գուսը կոճի յե խաղում, վոր տասը գառ
համրել չգիտի. ի՞նչ ել ունեն, 20 հատ վոշխար,
2 կով, 2 լուծ լեզ, 2 լուծ գոմեշ։ Ենքան ել
հարուստ չի, վոր ասեմ, հարստի տղի յեմ տա-
մու:

ԱԼՈ. Ետ յես լավ գիդեմ, համա, դու արի
տես, վոր զլավին Քերոբի նման մարդը լայեղ ե
արել, վոտը դրել մեր տունը. դու չես գիդի, վոր
ուզողի մեկ յերեսն ե ամոթ, չտվաղի յերկու։
Դու արի ու զլավին Քերոբի պես մարդուն դար-

դակ ճամբու դիր, ի՞նչ, հեշտքան ա, կամ մաս-
խարութին ա:

ԲԱՐԹՈ. Ափոն ողորթ ա ասում, նրան զլավին
Քերոփի կասեն, մերը չմեռնի, եքուց թշնամացավ,
ենենց թալաքի մեջ կը քցի, վոր տուն տեղ ծա-
խենք, տակից չկարողանանք դուրս գանք:

ԱԼՄԱՍՏ. Բա, այ վորդի, դուք կուղեք ձեր
աղջկանը կորցնեք։ Դուք շատ լավ գիտեք, վոր
տղիկը ուրիշ տղի վրա աչք ունի։ Հա եդ ել
մի կողմ զնենք, ախար Սրբոյի տղեն հացին փա-
փա յա ասում, թանին ել ֆուֆու։

ԱԼՈ. (Բարկացած)։ Դու հալա կնիկ ես,
զրուստ ա, մազերդ յերկար են, համախելքտ կարձ
ա. յես քեզ ախր բան ասացի. զլավին Քերոբին
չեմ կարա դարդակ հետ դարձնի. Մեկ ել՝ իրանք-
Մանուկենք կարքին ոջախ են, զաթի Սրբոն ել
անվանի իշխան, քանի, քանի տարի մարթը բյոխ-
վայություն ա արել. ես սահաթին ել սուզյա
յե։ Զաթի, խոսքն ել մարթի անունն ա:

ԲԱՐԹՈ. Ափոն ողորթ ա ասում, աղե ջան,
դու գուր տեղն ես բնկել աղջկանդ խելքին ու
խոսքը ես կողմ, են կողմ ծոռւմ։ Շատ ել են
տղին սիրում ա, ե, քանի կոպեկ արժի են սերը։
Սերս վժըն ա, բանս վօրն ա, անոթի վորին
ի՞նչ սեր, ի՞նչ բան։ Հա, զրուստ ե, Մանուկը
յերեխա յա, համա թե յերը մեծացավ, մեր բոլո-

ըից ել բոյով կլնի: Բոլ ա, բոլ, թող խելքը գլուխը
հավաքի, մտնի Սրբոյի պալատի նման տունը,
իրա համար ուտի, խմի, դարկի, թափի...

ՇՈՒԾԻԿ. Ետ ի՞նչ ա, դու կասես, առնողը
մազյար յես չեմ: Յես են յերեխին չեմ առնի,
վոր չեմ առնի:

ԱԼՈ. (Բարկացած): Սուս, անամոթ, ետ եր
պակաս, մեղա քեզի ասաված, ես որին ել հա-
սանք: Տո, անամոթ, անըզգամ, քու ելածն ի՞նչ ա,
վոր քու հոր դեմ կխոսաս: Դե, դե, մեկ ել
ձենտ շլսեմ, թե չե, ձիու պոչից կախ կանեմ, կը
քցեմ քարերը: Հալա դու տես աշխարքի բանն ե:
Բա յես վժնց զավակ եյի, վողորմած հերս ասաց՝
ձեր մորն առ, յես ել առա: Պակաս մարթ ու
կնիկ ելմնք, պակաս ձեզ նման յերեխերք ունե-
ցանք, հալա, ձեզ մի լավ թամաշա արեք. ասում
եմ, լուսահոգի հերս ասեր՝ մեռիր, կը մեռնի,
ասեր՝ ապրիր, կապրի:

ՇՈՒԾԻԿ. Ափո ջան, յես իմալ առնեմ են
երեխին. ամեն վախտ ել քո խոսքերը սրբու-
թյամբ կատարել եմ, համա ետ բանը չեմ կա-
նա կատարի: Կը մեռնեմ, ետ բանը չեմ անի:
Չեմ անի, վոր չեմ անի... ի՞նչ ասեմ, են որը սե
ըներ, վոր չը ծնվի յես: (Զերքերը վերկարկա-
ռած): Ախ ասաված, դու մազյար սե իր գրել
իմ ճակատին. կը ակն ընկներ, երեր աղջկա որո-

րոցը, յես ել վառվեյի, ոլրծնեյի ես սե ու դա-
ռը որերից: (Հեկեկում ե):

ԱԼՄԱՍՏ. (Աղջկան փաթաթվելով, լալազին
ու խեղվալով ասում ե): Բան չկա, բալես, երած
սրտիդ համբերություն...

ԱԼՈ. Այ, վորտեղ են ասած՝ խելոք մարդ.
Գլավին Քերոքը քիչ առաջ Յեղյա մարգարեյի
սիս ասաց—ի՞նչ ուզում ես անել, սիֆթա կնկա-
նըդ հետ սովետ արա, լավ լսի, տես, ի՞նչ վոր նա
կասի, դուն հակառակն արա, անխոս լավ կը
լինի: Հիմա յես ել ետենց գճուեցի. վոր մեր ու
աղջիկ մեռնեք, կոտորվեք, ետ բանը պիտի գլուխ
դա, քանի վոր իմ գլխին փափախ կա, վոչ թե
լաշաք: Ետ ձեր բանը չի: Դուք ձեր գործին կա-
ցեք, իմացաք: (Բարձր ձայնով) Գյաղա Բարթն,
գնա, համեցեք արա, թող գան: (Յերբ գլավին
Քերոքը ներս ե մանում, Շուշիիը դուրս ե զնում):

Տ Ե Ս Ի Հ 4.

ՆԱԽԵՐ, ԳԼՈՎԱՆ ԳԵՐՈԱ, ՄՐՅԱ Ո ՄՐՎԵՏՈՆ

ԳԼՈՎ. Քերիթ. Թաղադան՝ բարեկ ձեզ:

ԱԼՈ. Այ բարով, հազար բարով, համեցեք
նստեք, բարձ բերեք եստեղ. Շուշիկն ուր գնաց:
Քերոք աղա, ասա տեսնանք, թղթերիդ մեջ սկի
ի՞նչ կար...

Գլուկ. ՔերՈԲ. Վողջություն, ամեն բան
լավ է, նաչախիկը ինձի բարե ա արել ու յեկըս-
տրեննի կանչել ա:

ԱԼՈ. Ողորդ, Քերոք աղա, քո արունն ինչ-
քան քաղցր է. Կավկազի մեջ ել մեծավոր շմիաց,
վոր քեզ չըսիրեն ու քու խոսքն ել չըլսեն:

Գլուկ. ՔերՈԲ. Ինչպես տեսնում եք, մին-
չև որս թաքավորի պես ապրում եմ, ընդուռ հա-
մար, վոր յես ժողովրդի ցավը քաշում եմ, զրտ
համար ել մեծավորները հլա չտեսած, հասկա-
նում են: Այ, յես ձեզ մի բան ասեմ, հավատա-
ցեք, յես կյանքիս մեջ քիչ, քիչ, մի հազարից
ավել աղա յեմ պատկել, են ել ենենց տեղեր,
ենենց տեղեր, ենենց տեղեր, վոր իսկի զլուի
գալու բան չեր:

ԱԼՈ. Բատեղ են ասել, կուժ, քեզ ասեմ,
կուլա, դու հասկացիր: Ներողություն, Քերոք
աղա, ասածու առակի համար, քո ասածի Ալահ-
վերդին ինձ մոտ ա...

Գլուկ. ՔերՈԲ. Հասկացող մարդը իսկույն
կը հասկանա: Դե ասա, տեսնամ, ասա: Մեկ եղ
արագի շիշ ջերիցդ հան, որհնած արծվի կա-
թով բերաններս թրչենք, մե լավ քեֆ քաշենք,
ոշխարումս մեռնել կա...:

ԱԼՈ. Վոնց վոր յես ձեզ առաջուց ասացի,
ելի ասում եմ, վոր յես խոսքիս տեր մարդ եմ,

ավելի շուտ կուզեմ՝ իմ տունը քանդվի, քան թե
քեզ նման իշխանը իմ տնից զարդակ դուրս գր-
նա. մի աղջիկ չե՞քեզ զուրբան... համա ձեզնից
ինչ պահեմ, պառափս, մեկ ել աղջիկս մի քիչ չեմ
ու չում են անում, համա, քանի՞ զրոշ արժի:

Գլուկ. ՔերՈԲ. Ե՛, խնամի Ալմաստ, մոտ
արի տեհնանք, ինչ ես սուքն առել, սեր նստել.
ինչ ես մեզի ետքան ցավեցնում, կրակի վրան
ել պաղ ջուր լցնում. մեկ աղա, մեկ աղջիկ չե՛,
բաղդակոր ըլեն, մի բարձի ծերանան, վատսա-
րմ...

ԱԼՄԱՍՏ. (Ժխոր, տրտում, քիթը, թերանը
ծածկած, ցածը ծայնով): Աղա ջան, յես սրտանց
ուրախ եմ, մեկ աղջիկ չե՞ք, քեզի զուրբան, բայց
բանն ենա, վոր աղեն—Մանուկը շատ յերեխայ ա,
Շուշիկս ել 18 տարեկան, թե չե, յես իմ մահը
կուզեմ, քեզ նման իշխանի խոսքի վրեն խոսք
բերել չեմ ուզի...

Գլուկ. ՔերՈԲ. Այ հեր որհնած, վոր տղեն
մի քանի տարով փոքր յեղավ, աշխարք պտի
քանդվի. իմ խելքով հլա լավ ա, դուք պտի ու-
րախ հնիք, վոր աղջիկը թամամ խելքահաս ե,
տղին իրա բոի մեջ կրպահի, ինչ թափուր ուզե-
նա, են թափուր ել կը մեծացնի: Մեղսից շատ-
շատերն են ետ թափուր պսակվել, պակաս կաթն
ու կորեկի պես կապրեն: Այ ջանեմ, բան զինաք.

բան ասացեք, թե չե, ձեր ասածների մեջ իսկի նյութ չկա: (Բարձր ճայնով Սրբոյին): Դեհ, մեկ արադը հան, սիփթա տուր ինամուռ:

ՄՐՅՈՒ. (Արադի շիշը հանելով զրապանից, բացում եւ յեվ լցնելով՝ առաջարկում Արյին): Համեցեք, թաղա ինամի ջան, համեցեք: Առ, վայելա, ամեն բան լավ կը լինի: (Բաժակը քավական ժամանակ մնում եւ անշարժ, մերթ ընդ մերթ՝ կնոջ յերեսին նայելով, հետո վերցնում եւ բաժակը՝ հուզված):

ԱԼՈ. Բարով եք յեկել, հազար բարի, մեր տուն-տեղ, հելած-չեզած, ձեզի զուրբան: Շուշիկն ել ձեզի փեշքեց. խնամի Սրբո, աստված խերտա, խերով բազար ըլի: Քո որբազան պարտքն եւ իմ տղջկան վոչ թե հարսի պես պահես, այլ աղջըշկանից ել լավ: Հալա, մեկ մոր յերեսին նայեք, կասես Ալազյազասթնած ամպ լինի: Եհ, բոլորտ ել վողջ լինեք (խմում ե):

ԳԼԱՎ. ԹԵՐՈՒ. և ՄՐՅՈՒ. Անուշ, անուշ...

ԱԼՈ. Հալա մեկ խնամաթաս ել լցրու, քույրիկ Ալմաստին տուր, թող նա ել վայելի: (Ալմաստը հրաժարվում է խմելուց, բայց յերկար ստիպելուց հետո՝ ակամա շնորհավորում ե զլիի շարժումով, բաժակը մոտեցնում ե ըերանին, առանց խմելու յետ ե զնում սեղանի վրա: Գլավին քերորը ստիպում ե, վոր խմի, բայց, Արոն մի-

ջամուռ ե, ասելով, թե Ալմաստը իմիշը գործ չի ածում. Սրբոն բաժակը լցնում ե յեվ տալիս ե Դլավին քերորին):

ԳԼԱՎ. ԹԵՐՈՒ. Կենդանություն, սաղ ըլեք. յես սիփթա չնորհակալություն կը հայտնեմ խընամի Ալոյից ու քույրիկ Ալմաստից, վոր իմ պատիվը, վոնց վոր հարկն ե, պահեցին, դատարկ ձեռով յետ չը դարձրին, գուշմանին չուրախացրին: Տանուակը Սրբո, դու ել սաղ ընես, քո աշքն ել թող լույս ընի: Յես խմում եմ յերկու ծաղիկների կենացը, փեսացու Մանուկի և հարսնացու Շուշիկի: Թող աստված նրանց անթառամ պսակին արժանացնե, մեկ բարձի ծերանան: Համով հոտով ըլլին, հա, մւրա հարմացու Շուշիկը, չկա, կանչեք, թող գա: Եհ, սաղ ընէք: (Կոնծում ե, «անուշ» «անուշ» կոշում են քոլորը):

Տ Ե Ս Ի Լ 5.

ՆՈԽԵՆՔ յեվ ՇՈԽԵՆՔ:

ԱԼՈ. Ահա, աղջիկս եկավ: Արի հայրիկիդ մոտ, բալիկ ջան: (Փաթաթվում ե աղջկան): Հը, ծնողն ել իր զավակի վատը ուզի: Իմացիր, վորթի, յես քեզ ենհնց տեղ եմ կամեցել, վոր մհակի վեց անուն ունեն, Ֆարթիք կանոնավոր ոջախ են, իրանց համար առանց մուննաթի կաշխատեն ու

կապըեն: Հլա գոնից եկող մի տասը անոթի մարթու ել կը կշացնեն: Ղորթա, մանուկը մի քիչ պատիկ ա, համա, լավ հոր մոր զավակ ա. եստեղ են ասած՝ «աղեկ ձադն ի ձին, աղեկ մանուկն որորոցին»: (Կնոջը): Արի, կողակից ջան, արի, ի՞նչ ես սուքն առել-սկը նստել. աստված վողործած ա, դու դառւրմա բեր, պանիր բեր սուփրի վրա, ամեն բան լավ կը լինի:

ՄՐՅՈՒ. (Շուշիկին): Արի մատիկ, արի, իմ քաղցր հարսնացուս, սաղ մնացինք, չմեռանք՝ կը տեսնես, քեզ վոնց կը պահեմ. ենքան վոսկի նապալեռն կախեմ վզիցդ, վոր ճրագի պես լուս տաս, չուզողի տչքն ել քորցուս: (Աղջիկը հորից չի նեռանում):

ԳԼՈՎ. ՔԵՐՈԲ. (Յասավուլին): Այ աղա, մի ձեռաց եքստրնի մի զուրնա բեր, բլուլ վիչողն ել հետը. բան ա, թե ուրիշին դամ ասելիս կը լինեն, ասա, Գլավին Քերոբը կանչում ե: Հասկացար:

ՄԻԼԻՏՈՆ. Տո աղա ջան, չեմ իմանում, ինձնից խամ ես, ինչ ե. վորտեղից վոր ընի, պլետի տակ քաշելով՝ կը բերեմ: (Դուրս ե գնում):

Տ Ե Ս Ի Լ 6.

ՆՈԽԵՐԻ ԱՌԱԿՆԱ ՄԵԼԵՏՈՆԻ

ԱՐՔՈՒ. Խնամի Ալո ջան, մի նեզությունքաշի, մեկ մարդ զրկի մեր տուն, յու թե չե, մկա մե-

րոնցից ձեր յերթիկներին մարթ կը լինի, խարար արա, թող դան:

ԳԼՈՎ. ՔԵՐՈԲ. Յես պիտի ասելի, են ա, գու ասացիր: Սուզյա Սրբո, վոնց վոր յերեսումն, յես ու գու մեկտեղ պիտի մեռնենք, հա...

ՄՐՅՈՒ. Բաղաւավոր չեմ, վոր քեզ հետ մեռնեմ, սաղ աշխարհը զիտի, վոր քո պատիվը ես աշխարհումն ել շատ կը լինի:

ԱԼՈ. Աղա Բարթո, մի ձեռաց զնա, խնամիքին բեր:

ԲԵՐԹՈՒ. Ես սհաթին, Ակո ջան: (Գնումին):

Տ Ե Ս Ի Լ 7.

ՆՈԽԵՐԻ ԱՌԱԿՆԱ ԸՆԿԹՈՒՅՑ

ԱԼՈ. Դե, մատաղ ձեզի, ու կերեք, խմեք, քեֆ արեք, դուշմանի աջքը հանեք: Ի՞նչ եք վախենում, զինին ու արազը ծով ե: Դե յալլա, յալլա, յես ձեզի զուրբան, դուք ինձի վոչ...

ԳԼՈՎ. ՔԵՐՈԲ. Սուզյա Սրբո, մե թութունդ տուր, տեսամ, մե պապիրոս քաշենք:

ՄՐՅՈՒ. (Դրավանները նայելով յել ծիստութի տուփը շզոնելով): Վայ, իմ աչքերը քոռնան, զլավին աղա ջան, թութունըս մոսցա տանը: Եղ անտերը գուլում բան ա քաշողի համար, տանց

հացի մարթ յոլա կեթա, համա, առանց թութունի մարթս թամամ կցնթի:

ԳԼԱՎ. ՔԵՐՈԲ. Թութուն չկա, չկա, հոյերգը կա: Այ, ողորմի հորըդ, մեքո են քաղցր ձենով թութունի յերգն ասա, նրա գովքն արա մինչի զուանեն կգա:

ՍՐԲՈ. Աչքիս վրա, Քերոփ աղա: (Ոծիքը բացելով յեվ կուրորդը մաքրելով, յերգում են, ձեսքը համաշափ շարժելով՝ ըստ յեղանակի տարտի: Գլավին Քերոբն ու Ալոն անում են նույնը, ծայնակցելով Սրբոյին, «վայ, լըմի, վայ» կօրկնակը յերգելիս):

«Սել, արաբա դառսն կաճկա,
Քափուր թութուն ելավ պաչկա,
Քեզնից զոռքա ել բան չըկա,
Թարիֆդ անեմ, ազիզ թութուն,—
վայ, լըմի, վայ:

Տըղերք դըրին խաս կարմիր ֆաս,
Իրար կամեն՝ նաֆաս ըմ տաս.
Դիվանխանեք միշտ ման կըդաս,
Նաշալնիկ ես դառե, թութուն,—
վայ, լըմի, վայ:

Թե կըքաշեմ՝ սիրտ կըխառնա,
Թե չեմ քաշի՝ որըս դառն ա.
Խեղճ Սրթենն իր քոչ կըքառնա,
Կերթա ձեռեգ զանգատ, թութուն,—
վայ, լըմի, վայ:

ԳԼԱՎ. ՔԵՐՈԲ և ԱԼՈ. (Հիացած բացականչութ են): Այ, սաղ ոլ, այ, ձենդ անսպառ, ուռդյա Սրբո: Հոյ հանամի չես, հազարան բիբուլ ես:

ԳԼԱՎ. ՔԵՐՈԲ. (Վոզեվորված բարձրացընում ե բաժակը): Սուզյա Սրբո, ալլահվերդին քեզ մոտ, ես թանգագին կենացը խմում եմ քո թաղա խնամիների—յեղբայր Ալոյի և քոյր Ալմաստի կենացը: Յերկուստ ել վողջ լինեք, բարով, խերով ձեր Բարթոն ել ես որին արժանանա: Իհարկե, «ամի աթասընա չյաքյար, ողուր գայըընա»: Բարթոն ել, կասես, հոր պնչից թուել ա. թող սաղ ընի, իրա հոր ոջախից անպակաս ընի: Ինչ ասել կուզի, աշխարհ ել զիտի, վոր Շուշիկը Ալաղյազա անթառամ ծաղիկն ա, սիրունության, թե բնության կողմից, մոր հետ ինչպես մի սանդրի կտավ ըլեն. թող ետ թավուր մերը որհնվի, վոր ետ տեսակ զավակ ա մեծացըք, վոր մեր սաղ յերկրի փառքն ու պարծանքն ա: Ետ ե պատճառը, վոր ուզողները իրար ձար ու ձամբա չելին տալիս, զոնից մանում՝ յերթիկից գուրս զնում, յերթիկից մանում՝ զոնից յենում: Ուրեմն, ձեր թանկագին կենացը: (Կոնճութ ե):

ՍՐԲՈ. Աղա ջան, աստված թող մեր ումբրից կտոի, զնի քո ումբրի վրա, եսաեղ ե ասած.

«Աղամ վար, քի աղամլարըն նախշի դըր,
Աղամ վար, քի հեյվան ոնդան յախշի դըր»:
Ուզում եմ տեղ, վոր դու մեր յերկրի ծաղիկն
ես...

Տ Ե Ս Ի Լ. 8.

ՆՈԽԵՆՔ ՁԵՒ ՍՍ ԶԱՅԴԱՐԵՆԵՐԸ

ԳԼԱՎ. ՔԵՐՈԲ. Ահա սազանդարներն ել յե-
կան. բա ուր ե Սրբո, ձերոնք չկան...

ՍՐՅՈ. Ես ա, կը գան...

ԱԼՈ. Ուստեք, համեցեք, նստեցեք: Համա
Քերոր աղա, ինչ ուստեք են, թե բլուլի վրա յեն
փչում, թե նայինի:

ԳԼԱՎ. ՔԵՐՈԲ. Բայց դու արի տես, վոր
յես բլուլը ավելի յեմ սիրում: Եսենց ջիգար
մղկտացնող բան չկա: Իլլաքի սավդաքար մարդու
համար:

ՍՐՅՈ. Բլուլի տունն ավիրի: Չուրի Ստամ-
բու ել կը փչեն:

ԳԼԱՎ. ՔԵՐՈԲ. Մե բլուլը սարքա, աչքերս
ջուր կտրավ, մե վոչխար քաշա, տենանք: (Բա-
ժակը տալիս ե զոտնաշուն): Մե տո, տո, տո,
մե կտառի տաքացըրու, են վախտը յես գիդես,
վոնց կը փչես: (Եվագում են. յերեքով անդադար

իմում են, Շուշիկը տխուր, պլուսը ծռած՝ նստած
և մոր մոտ ու յեղանակին հարմատ ոքորում ե
պլուսը: Մի քիչ անց, Մանուկը ներս ե մտնում,
մոր փեշից բռնած՝ մի քանի կանանց հետ):

Տ Ե Ս Ի Լ. 9.

ՆՈԽԵՆՔ, ՍՍԱԼՈՒ, ՄԱԿԱՐԵ, ՁԵՒ ԽԱՐԹՈՒ

ԱԼՈ. Վայ, բարով, հազար բարի, իմ աղա
փեսա, իմ քաղցր խնամիք, համեցեք, համեցեք,
նստեցեք: (Ենքս մտնելուց բարեվում են բոլո-
րին, Շուշիկը առանձին դժվարությամբ բարե-
վում ե սկսութին, վերը նրա դեմքն առնելով
ափերի մեջ, առանձին - առանձին պաշում և
թշերը: Շուշիկը Մանուկին չի բարեվում):

ԳԼԱՎ. ՔԵՐՈԲ. Առաջարկում եմ խմել Սալ-
րու և Սրբոյի կենացը: (Խսկոյն յեվ յեթ խմում
են, չլարդանալով ծառել շատ հարքած լինե-
լուց: Սրինզը շարունակում ե նվազել մի շարք
արյեվելյան յեղանակներ: Սկսութը ծեղքը Շու-
շիկի վզովք զգած՝ խոսում ե Ալմասի հետ: Մա-
նուկը ներս մտնելուն պես՝ վազում, նստում և
հոր գիրկը յեվ ապա տեղովորվում ե Սրբոյի ու
Քերորի մեջտեղը, ամբողջ ժամանակ խաղում ե

ՔԵՐՈՔԻ ԽԱՆՁԱԼԻ յեվ կոճակների հետ։ Մըքում
ե ՔԵՐՈՔԻ ՄԵԽՈՎԱԼԾ իր զգեստի փեշերով, ապա
մտքակը խլելով յեսառլից՝ մտքակում և յասա-
ռլին յեվ զուսաչիներին։ Գլավին ՔԵՐՈՔԸ հար-
բածառաջարկումն Սըքոյի յեվ Արյի հետ «յայլի»
պարել, վորոնց միանում են բոլորը, բացի Շու-
շիկից։ Մանուկն ել մոր փեշեց բռնած՝ վեր-վեր
թռչելով պարում ե)։

❖ ԳԼԱՎ. ՔԵՐՈՔ. (Հոգնած զոռում ե. «Աստ-
ված ջնորհավոր անե»։ Կամաց-կամաց՝ «միաս
բարով» անելով, հեռանում են բոլորը)։

Տ Ե Ս Ի Լ 10.

Ա. Ա. Ա. Մ. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.

(Փոքր պառկայից հետո՝ Շուշիկը հանկարծ
փղծկում ե)։

ՇՈՒՇԻԿ. Ափո ջան, ափո, ծնածս սհաթից
մինչե եսոր, յես քո դեմ թամամ հարս եմ յե-
ղել, բարձր ձենով չեմ խոսել, բացց եսոր պիտի
խոսեմ։ Ափո ջան, դու ինձի սաղսաղ թաղում
ես. թող սև ըլլեր իմ ծնունդը, ափո ջան, ափո
(«մեղացնում ել լացը»). յես լավ հասած աղջիկ,
իման ես տալի ինձ են զրկանոցին, են հավի
ճուտին։ Յես ուզում եմ կին լինել, առլեւ վոչ

թե գնալ Սըքոյենց տանը քոծ դաւնալ, զարեա-
շություն անել։ Դու լավ գիդես, ես Յ տարի յե,
են տղեն ինձ վրա աչք ունի. մի հասակի ջահել-
ներ ենք, իրար հետ զառ ենք պահել, խաղացել,
մեծացել... Այս, ինչ անեմ... (Հոնգուր, հոնգուր
լաց և լինում)։

Ա. Ա. (Հարթած. հազիվ ե իրեն պահում
վուեցով վրա)։ Սուս, լիրը, անամոթ, սեկ ել ե-
սենց բաներ չլսեմ, թե չե, առանց խոսալու՝ կը
գյուլեմ։ (Պատկում ե թախտին, շարունակելով
մըմնչալ քեֆի յերգը)։

ՇՈՒՇԻԿ. (Խեղովելով, բարձրածայն հն-
կեկելով յեվ լացից փաթաթվելով մորը)։ Ագե-
ջան, ագե, վոչ բարով, վոչ սալամաթով դու ծը-
նիր ինձի, աշխարհ բերիր։ Իսկ դու, ափո, լավ ի-
մացիր, վոր գանակը վոսկորիս հասավ, քո գյու-
լուց ել չեմ վախենում։ Ավելի շուտ՝ դուն իմ
դիցակիս վրա կը մզկտաս, քանի թե մանուկի
հարսանիքին կըպարես։ (Բարձրածայն հնկեկում ե)։

Վ Ա Ր Ա Զ Ո Ւ Թ Ր

ՅԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԻԿԻ ԱՌԱՋԻՆ

Հեռվում քառագագաթ Արագածի կանաչ լանջերից
մեկի վրա կանգնած է, առավոտյան մթնշաղի մեջ,
հովիվը, այծեմնիկը (յափնչին) կիսով ծգած ծախ
ուսին, վրտների տակ պատկած գամբո շունը: Հովիվը
հենված ձեռքի մահակին՝ յերգում է.

«Աբարան բարձր սեղ ա, վա,
Զուրը հիվանդին դեղ ա, վայ,
Յես սիրեցի, վայ, խալիսը տարավ
իմ սիրած յարը,
Ախ, թե չառնեմ, վայ, յես կմեռնեմ,
իմ սիրած յարը»:

Տ Ե Ս Ի Լ 1.

ՏԻԳՐԱՆ ԽՎԱՅՈՐԴԱՆ

Տիգրան. Բա, ախպեր ջան, եսենց ել կրակ
կըլինի... ել ես բանից հետո իմ ապրիկը քանի
գըոշ աժի.

ՎՈՐԴԱՆ. Բա, ել ասում ես...

ՏԻԳՐԱՆ. Բա, ախպեր ջան, ես խիզճ ա. բա
ես խսափ ա... որը ցերեկով ինձի գյուլեցին, դրին
դեն: Մարթիք, են ա, ուզում են զրվաթի զոռով
Շուշիկին ձեռիցո թոցնեն, ելի...

ՎՈՐԴԱՆ. Այ ջանրու, վոնց ել իրար գթել
են, թե խղճի, թե խսախաթի կողմից, կասես
մի սանդրի կտավ ընեն:

ՏԻԳՐԱՆ. Եստեղ են ասած. ես շունն ել
են շնեն, յերկումն ել մե տնեն. մարթիք թա-
մամ կաթն ու կորեկ են: Ղուրբան քեզի, հլա-
ռւր ես, հլա ենքան աներ քանդեն վնր...

ՎՈՐԴԱՆ. Գյուվա չեն քանդե, նոր պըսի
քանդեն. ընչի չե, թերոքը սատանի փահեվան,
Արքոն ել նրա յալանչին, մեկը գլավին, մյուսը
սուզյա, ինչքան մատաղ ընի, ոսկոռը իրար հետ
են կոժում:

ՏԻԳՐԱՆ. Վարդան ջան, ես բանը մի հլա-
րավ կշռա, են վախտը կը տեսնես, վոր թամամ
ինձի գյուլախորով են տրել, չումքի վոր, իմ
և Շուշիկի իրար աչք քցելը մեր գյուղի միջի ո-
րորոցի յերեխեն ել զիտի:

ՎՈՐԴԱՆ. Տո, հոգուտ մեռնիմ, հալբաթ վոր
զիտեն:

ՏԻԳՐԱՆ. Հեռու հարկից, հեռու տնից, հա-
լա են, են, թիզ ու կես, գետնի մուսես Արքոյին

Դաստիք

Ե... Աշխարքի մեջ ինչքան սատանություն կա՞
սար նրա մուտ ա:

ՎԱՐԴԱՆ. Դրուստ վոր Ե, ասում են, ով
զիտի, գարունը հողաբաժնություն ըլնի, յա չըլնի:
Համա, ենքան սատանա մարդ ե, վոր ձուկը գըլ-
խիցըն ե բանում, վոր ինչ ա, թաղա հողաբաժնու-
թյանը իրա լավ-լավ հողերից չկարեն, ուրիշին
չտան: Ու իրան են գրկանոց Մանուկին մի կտոր
հողի համար նշանեց: Մենք ենք խող-զլուիներս,
վոր գարի հացին գաթա յենք ասում:

ՏԻԳՐԱՆ. Տո, այ ջանըմ, այ պյողըմ, բոլ ա.
առ արեա կը սիրես, թարգը տուր: Տո ընդոնք
վոր կան, հոգուց ու խղճից զուրկ մարթիք են.
(տաքացած) ընձի վոր գրուստը հարցուս, մարդ
պտի ընդոնց երկուսի զլուխն ել կարի, աղը դնի,
ոլոծավ, գնաց:

ՎԱՐԴԱՆ. Այ, ինչ եմ ասե, այ, հախ դիվան...

ՏԻԳՐԱՆ. Թե չե, ախաղեր ջան, հողի լավը
իրանց, ախշկա լանի իրանց, բա մենք ինչացու
յենք ես գառը աշխարհի մեջ:

ՎԱՐԴԱՆ. Դրուստ վոր Ե. համա, իսկը մեր
գեղի խաղ կապող աշուող Մելքոնի ասածն ե ըլե-
լու, վոր ասում եր.

«Մարդ կա կոտա, կխմա, հայ կանա.
Մարդ կա, դարդի ծեռքից վայ կանա,
Հանի, քանի տղամարդիկ զայ կանա—
Մեկ սերը սավեն, մեկ աղքատություն»:

Հիմա քոնն ա, ինձեն բեշբեթար, ինչ ունես, քո
սրտխովանքն ել ետ աղջիկն ե, են ել ձեռիցդ
հանում են:

ՏԻԳՐԱՆ. (Կատաղ ծ): Վարդան ջան, եղ,
եղ, ինչ ես ասում, տո, մազյար յես մեռել եմ,
վոր ետ բանը զլուխ գտ: Տո յես ես աշխարքը
քար ու քանդ կանեմ. (ատամները կը մտացնե-
լով) ես ատամներով Քերոբի են, են, բոկը կը
կրծեմ, արունը կը խմեմ: Բոլ ա, ախաղեր, բոլ ա,
մենք ել մարդ ենք, մենք ել հողածին ենք, մեզ
ել աստված ա ստեղծել: (Վրոբի ձայն. կամաց):
Կա, չկա, ես եկողը Շուշիկն ա...

* **ՎԱՐԴԱՆ.** Եե վոր եղակես ա, յես գնացի.
ամեն բան Շուշիկին լավ հալա, թափա, վոր իրա
խոսքին պինդ կայնի, իսկ վոր բանը հասավ զո-
րին՝ թող Սրբոն ու զլավին Քերոբը իմանան,
վոր Վարդանը քամակիտ կայնուկ ա:

(Զգուշությամբ հեռանում ե: Յեշեվում և
Շոհօնիկը. ոչիմ կերպով, չորս կողմը դիտելոց,
ջնի սափորը զետին դնելոց հետո, վաթաթվում և
Տիգրանին, զրկախառնվում ու համբուրում են):

ՏԵՍԻԼ. 2.

ՏԻԳՐԱՆ. յեկ ՇՈՒՇԻԿ

ՏԻԳՐԱՆ. Հըլ, հերդ նշանիդ արազը խմեց,
ելի:

ՇՈՒՇԻԿ. Այս, արազը խմեց, վոր ինձի եռ
որը զցեց... Հալեց, մաշեց երեց, խորովեց...
(արտասվելով): Ինչ ասեմ, ղլավին Քերոբ, բալետ
կատղի, կարմիր գյուղի ոաստ գաս, ետ, ետ...
մարդագելլ վոր չներ, ես բարն ել չեր ընի...

ՏԻԳՐԱՆ. (Անհամթեր): Տո, զահրումարը
խմեց, սև ցավը խմեց: Դու են ասա, գու, գու
ինչ ասիր. յեա ինչ արիր:

ՇՈՒՇԻԿ. Տո, դու հողը տաս իմ դլախն,
ինչ ձեռքից կգար, վոր ինչ անեյի...

ՏԻԳՐԱՆ. Հետո, հետո...

ՇՈՒՇԻԿ. Հորս, ել ինչ ասես, վոր չասի:

ՏԻԳՐԱՆ. Ասա, ասա, ինչ ասիր:

ՇՈՒՇԻԿ. Ասի, վոր հաղար գլավին Քերոբ
մեռնի, եղ զրկանոցին չեմ առնի, ու չեմ առնի,
ափա, վոր մորթես, փրթես, ղընես խանչալի տակ
շինա-շինա անես, չեմ առնի, վոր չեմ առնի:

ՏԻԳՐԱՆ. (Մեղմացած): Բա ինչ ես ասում,
ինչ անենք:

ՇՈՒՇԻԿ. Խելք մնացել ե՞ զլուխս, վոր խել-
քակտոր բան ասեմ:

ՏԻԳՐԱՆ. Շուշիկ ջան, ել ուրիշ ճար ու
ճամբա չկա, վախչելուց սավայի...

ՇՈՒՇԻԿ. Փախչելուց...

ՏԻԳՐԱՆ. Փախչենք, գնանք հեռու, հեռու...

ՇՈՒՇԻԿ. (Ուրախ ըռնած Տիգրանի ուսը):
Փախչենք, վախչենք, ինչ լավ ասացիր:

ՏԻԳՐԱՆ. Դեհ ջանս, շուտ արա, շուտ,
քանի մարդ չկա, թոչենք: (Շուշիկը լուր ե: Մի
թիշ հրամայողաբար): Դե շուտ արա, շուտ, ինչ
ես քարացել... (Թեվից քաշելով) գե հը, գնանք,
միտք անելու վախտ ես գթել...

ՇՈՒՇԻԿ. Տիգրան ջան, Տիգրան, մի քիչ
ուպր արա. ախր ուր գնանք, ինչ անենք, վհնց
վախչենք...

ՏԻԳՐԱՆ. Հըլա, հըլա... (զայրացած) աղջի,
խելքա թոցրիլ, գեհ, հիրար արի, գեհ, շուտ
արա...

ՇՈՒՇԻԿ. Ի՞նչ հիրար զամ, ինչ անեմ:

ՏԻԳՐԱՆ. Չես գալիս, հա...

ՇՈՒՇԻԿ. Վախում եմ, ամոթ ա:

ՏԻԳՐԱՆ. Վախում ես, ամոթ ա, հընչի...

ՇՈՒՇԻԿ. (Տիգրանի ծեղքը ամուր ըռնած):
Տիգրան, վոտքերիտ զուրբան, իմալ վախչեմ,
իմալ հորս ու մորս նամուսը վոտնակոխ անեմ,
նրանց անեծքի տակն ընկնեմ: Իմալ վորդոց
վորդի՝ հորս ոջախը խայտառակ անեմ:

ՏԻԳՐԱՆ. (Վերին աստիճանի զազազած յել կատաղած): Հըմ, չես գալում հա... մազյար մեր բախտավորությունը հորդ ու մորդ նամուսին ես մատադ անում, կամ սրա, նրա լավ - վատ ասելուն ես քեզ բախչում: (Ահասելի զազազած յետ և միում Շուշիկին): Թող թես, թող, քեզ եմ առում, թող, չեմ ուզում...

ՇՈՒՇԻԿ. (Լացը ուժեղացնելով): Ախր, քեզ փնց թողնեմ, առանց քեզ փնց ապրեմ:

ՏԻԳՐԱՆ. (Ժայր աստիճանի կատաղած): Վոչ թողնում ես... վոչ փախչում ես, քանդվես աշխարհ, ավերվես յերկիր... (Ուժզնությամբ ձեռքը ազատում և Շուշիկից յել անհայտանում):

ՇՈՒՇԻԿ. (Փոքը ինչ լուս մնալուց հետո, սարսափահար, հեկեկալով): Տիգրան ջան, Տիգրան, իմ ջան ու ջիգյար. Տիգրան, Տիգրան, Տիգրան... (Զայնը յել լացը աղեկատուր դարձնելով, ընկնում և յերեսի վրա. բավականաշափ լություն և տիտում: Այդ լության պահին լեռներից լավում են առավոտյան տափարն ու վրչխարը դաշտ քշող գյուղացիների ծայներ, ինչպես. «Հո, հո... հեռի... տա... տա... տա... ոհո... ոհո... հո... յեվ նման բացականշություններ: Ապա հեռվից լավում են մելամաղձոտ ժողովրդական յերգը»):

«Դըլե յաման, ուր կիրիշկեմ,
Մըժ ու գյուման,
Քաֆուր ֆալագ, վոչ մի տեղից
Ճար ու գյուման, յաման, յաման...»:

«Քաֆուր ֆալագ» խոսքը ցնցում, կարծես սթափեցնում ե Շուշիկին, վորը գլուխը բարձրացնելով, շոքում ու հուսաբեկ բացականշում ե. «Վայ, զուլում ֆալագ, վայ, լըմբն ֆալագ»:

ՎԱՐԱԳՈՒՅՑ

ՊԱՏԿԵՐ ՅԵՒԿՈՐԴԻ

Սրբոյի տունը: Ամի Գերբորը մեկ ձեռքին չփառիս,
ճյուս ձեռքը ճակտին: Սրբոն ձեռքերը խաշած՝
զբովնում ե ջղայնացած, իսկ Սալբին անդադար
ձեռքերը շփելով, ախ ու վախ ե անում:

ՏԵՍԻ. 1.

ԱՄԲ ԳԵՐԵՎՈՐ, ՄԵՐՎ ՅԵՎ ՄԱԼՅԻ

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Որ ջոշություն, խայտառակություն. սան ալլահ, յես կյանքումս եսենց խայտառակ բան հրլա չեցի տեսել:

ՍՐԲՈՐ. Վայ վավեր, վավեր. ես ինչ հող իր, քաշի իմ գլխին, ես ինչ ոյին բերի իմ ջանին, մի կտոր հողի համար. հեյ գիդի ապրուստ, վայ զուլում ապրուստ, քո քաղցրությունն ասեմ, թէ քո դառնությունը...

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Հեռի հարկից, առ լիրը, անամոթ քած, գու սուզյա Սրբոյի հալունացուն ընես, աքլուսականչին, են Աթամա մթանը, են վախտը, վոր չարն ու բարին կռվում են, գու քեզի համար Ալաղյազի ծաղիկների մեջ, են թո-

կից վախտած Տիգրանի հետ պաչվես, քեզ անես, բաս ես բանը աստված կը վերցնի:

ՍԱԼՅԻ. (Մեկ ձեռքը ծոցը դրած, մյուս ձեռքը ծնկին շփելով): Ախ, յերանի սուս ըներ...

ՍՐԲՈՐ. Բաղզավնը, չոբանի ասածը սռւտ, բա են մեկեներինը... հազը են ա, սադ զեզը թնդնւմ ա...

ԱՄԻ ԳԻՐՔՈՐ. Փամից յես եմ զալում, ոզորմի ասաված գու յես ասում. ինչ մեկ, հազար մարդ խոստովանաբար ինձ ասած կը լինի ետ բանը:

ՍՐԲՈՐ. (Կրզոված զիմում և կնոջը): Բաս, ես ել քո հավանած ու գովաբանած հարսնացուն: Գլուխս տարել եյիր՝ հա գովելով ու գովելով:

ՍԱԼՅԻ. (Ծովնալես զայրացած): Տո, ասու բաբելական կրակը թափի Սալբու գլխին, վոր թափավ: Մենակ Սալբին եր գովնւմ, սադ աշխարք եր գովում, յերկինք հանում:

ՍՐԲՈՐ. Հնչի քո գլխին թափի, հազըր իմ գլխին թափի, վոր թափավ, են ել վոնց թափավ: Սաբար մի կտոր հողի՝ աշխարքի մեջ խայտառակ յեղանք. ել սրանից հետո մի հոտազի հետ չես կարա խոսի:

ՍԱԼՅԻ. Գիտաս ինչ, այ մարդ, ինձ վոր մնա, հենց ես սհաթին վերկաց, գնա, մեր նշանը

յեղ ուզաւ, ետենց խայտառակությունից յետոյես
չեմ կանա Շուշիկի պես անուն կոտրած հարս իմ
ոջախը բերեմ: Սաղ աշխարքը կը թքա մեր ա-
բուռին, մեր լեշին:

ՄՐՅՈՒ. Ողորթ ա, ետենց ա. Շուշիկը ձա-
քած կճռւծ ա, վոր ել ջուր չի պահա: Իրա վո-
տով սիրեկանի մոտ գնացողը, իրա ձեռքով ել
նրա համար դուռ կը բանա... Ես թափուր խայ-
տառակությունից իմ ոջախը հավիայան կը մրուտ-
վի, կապականվի... Ալոյի աղջիկ Շուշիկը մեր
արտի սերմացու չե. եթամ նշանը յեղ առնեմ,
ես ամոթից ազատվեմ...

ՄԱԼԻՅԻ. Գնաւ, այ մարդ, գնաւ, ել հուշանալ
մի: Ախ, բաղդավոր չեյինք, վոր մեր հողը մի
կտոր պակաս ըլներ, ես խայտառակությունն ել
Հներ (զլոյից շաբժելով):

ՄՐՅՈՒ. Ախ, հողարաժանությունը վոր չներ,
ես բանն ել չեր հնիի:

ՄԱԼԻՅԻ. Ախ, վարժապետ ջան, ետ իմալ
մարդ եր, գիտնակ եր, մարգարե եր, լնչ եր.
միտու ա, հա, վոր կասեր 18 տարեկան հասուկ
աղջիկը 12 տարեկան քորիա յերեխին կնիկ.
չընի: Ընդուա համար ել մեր աչքին փուշ եր
դարձել:

ՄՐՅՈՒ. (Ախ քաշելով): Բա միսս չե, խեղճ
քամակը, վոչ բարով՝ նշանվեր յերթալու որը

աղ կերավ, լեղի կերավ, վոր ետ բանը քանդվի,
համա զատ դուս չեկավ:

ՄԱԼԻՅԻ. Ախ, աստված մեր առւնը քանդա,
վոր քանդեց. մենք վոր կանք՝ կոտիտ անհիմար,
կողանի մարթիք ենք. հեշտ, հանգիստ յերբ մար-
թի կլսենք: Են ահազին փթանոց զրքեր կարդա-
ցող մարթը, աշխարհի չարն ու բարին, սեն ու
սիպտակը ջոկող մարթը, նստել եր, մեր հետ ախ-
պոր պես՝ սրտացավանք բաներ եր ասում. հալ-
բաթ, մարթի սիրող վկայում եր, վոր մեր գլխին
ես ոյինը պիտի դա:

ՄՐՅՈՒ. Ողորթ ա, հողից ու ըսանչպարությու-
նից զլուխ չուներ, ենքան ել զատ չեր հասկա-
նում, համա, քո ասածի պես, ինչքան ել վոր
չնի, ուսումով եր. եստեղ են ասած. «Տաշած
քարը գետին չի մնա»: Դրուստ վոր, ետենց ել
յեղավ, են մարթի խոսքը գետին չմնաց:

ՄԱԼԻՅԻ. Այ ողորմի հորդ, ելավ գնաց. պա-
պանական առակն ել ետ ա ասում: «Գիտունի
հետ մարթ աղ ուտա, լեղի ուտա, անգետի հետ
մատադ չուտա»: (Առանձին քնքշությամբ): Մրքո
ջան, Մրքո, դու ընես Մանուկիտ աղիզ արեր,
տունը մերը, խոսքը մերը, դրուստ ասա, մենք
եր, յանի ինսան ենք... յարաք, ինչ զանազանու-
թյուն կա իմ և մեր կարմիր կովի մեջ...

ՍՐՅՈ. Յա ել չե, իմ ու մեր մարտյեզան
մեջ:

ՍՈԼԻԲԻ. Սուտ ա վոր, հա...

ՍՐՅՈ. Հինչա սութ. արթաբություն վոր
կը հարցուս, ենենց ա, ելի՛, են մարթի ասածը՝
ինչպես յեղը կաթեցուս մեղրի մեջ: Յեղը, վոր
յեղ ա, պարի իրան նման ընկեր ընի, վոր հավա-
սար լուծ յերթան, թե չե, մենք մողին ուզում
եյինք լծի յեքա ջանավար յեզան հետ:

ՍՈԼԻԲԻ. Այ, ինչ եմ ասում, այ, արդարու-
թյունն ել ես ա:

ՍՐՅՈ. Բա, ախտեր, ուսում... ուսումի մե-
րը չմեռնի. ուսումը վոր կա՞ քար կը ծակա:
Համ տես, Սալբի ջան, ընձի վերցունք, ահազին
ուսույա մարդ, մեկ դարդակ ձեռք քաշել ել չեմ
զիդա, դրա համար ել, գործի մեջ լակոտ-լուկու-
տի յեսիր եմ դառնում...

ՍՈԼԻԲԻ. Հալբաթ վոր, հիմա դու վոր ուսում
առնեյիր, գոյ զիդի՝ ի՞նչ կը լինեյիր:

ՍՐՅՈ. Մեկ վոր չնի, չնի, ուրյադնիկ ել ա
կնի. համա դու բեր, վոր ետ անտեր ուսումը
հնքան ել հեշտ բան չե: Հազարից մեկ մարդու
զլուխ կը մտնի... այ, լավ միտս ա, ինչպես
եսոր, յերեխա վախտոս մեր տերտերի մոտ մի ա-
հագին ձմեռ կարդացի, համա անձախ յերեք զիք
զլուխս մտավ: Մեկ վոր «այրը», ինչպես փոցիս

զլուխ, մեկ «ն», ինչպես պըպզած շունը, թվե-
րից ել «Շ»-ը, վոր կասես խոկը պոչով գերանդու
անչից թուած ըլնի:

ՍՈԼԻԲԻ. Տեսնում ես, յերեք գրով սուզյա
դառար, բա վոր մե տառը զիք ել ավել զիտե-
նայի՞ր:

ՍՐՅՈ. Ա՛, Են ժամանակ թրիս յերկու բե-
րանն ել կը կարեր. վայ, եսառոց հետո նալլաթ
ըլի չար սատանին, պիտի շապիկս ծախեմ, անուն
մեր տան մեջ գտնված յերեխին են սհաթին
տամ ուսումի: Մեկել, վարժապետի ըսածի պես,
տղին են ժամանակ պիտի պսակել, վոր պեխե-
րը կմրի ու շուռ յեկած արաբեն ել մեկ ձեռ-
քով կայնացնի: (Բարեկացած Ամի Գիրքը ըին): Հը
ամի, են որը րիլլուլ եյիր զառել, զե հիմա խոսա,
մի բան ել գու ասա, թե չե, սրանիքս պատուավ ե...

ՍՄԻ ԳԻՐՅՈ. Տո, ետ ինչ ա, զուք կասեք,
չեմ գիդի. զուք վոր լավ մտածեք, կը տեհաք,
վոր աշխարհի յերեսին ինչքան սասանությունն
կա՞ սաղ ուսումնականների տակն ա, ուսումով
մարթի սասանությունն ել ուսումով ա ընում,
իմ ժամանակ որհնված ժամանակ եր. ջրի դնա-
լուց՝ յերբ մի կնիկ մի տղամարդու հետ յեղու
կը թոջեր, տաճուտերը ետ թափուր կնոջ մար-
թին կը բերեր, կը քցեր ճիպուտի տակ, մի լավ
կը խաշեր, վոր իրա կնկա զյամը քաշեր:

ՍՐԲՈ. (Բարկացած): Մուս յեղիք, ամի,
սուս, սուս, դու ել ես հնացել ու ժանգոտել,
քո ժամանակն ել, քո սովորություններն ել. ճըշ-
մարիտ վոր խոսանք՝ ես բոլորի սաբարը դու յես,
վոր դու...

ԱՄԻ ԳԻՐՔ. ՅԵս...

ՍՐԲՈ. Համա դու, հրամանքդ... դու մեր
ցեղի քոթուկը... նահապեալ... հա ասելով, ա-
սելով, քո փթած հին խրատներով մեր տունն ել
արիք մի քոռ կոպեկի:

ԱՄԻ ԳԻՐՔ. (Զայրացած) Ախպեր, վոր ե-
տենց ա, ձեր գուխը ձեր փորը. սրասից հետո,
ինչ կանեք՝ արեք, յես ձեր վոչ խերին, վոչ
ել շառին կը խառնվեմ, ընձի կհասնի Յ արշին
հող. (Վերցնելով իր չիբուխը, պատրաստվում ե
դուրս զնալու):

ՍՐԲՈ. Հըմա գրանից ել լավը չկա, գնա
ախպեր, գնա: (Ամի Գիրքորը գնում ե, խիստ
վիրավորված):

ՏԵՍԻԼ 2.

ՄՐԿՈ յեվ ՍԱԼԵՐ

ՍՐԲՈ. Ախ, Սալբի ջան, ես խայտառակու-
թյունից հետո ենենց եմ կարոտացել մեր են

վարժապետին, ենենց. դրուստն ասած, վոչ թե
մենակ նրան, այլ բոլոր ուսումնականներին:

ՍԱԼԲԻ. Հա, հա, ասա, ասա; իմ սրաի
միջից ես խոսում. հիմա, վոր են մեր վարժա-
պետը ձեռքս ընկներ Ե, Մանուկիս աղիզ արել
վկա, ամեն որ ձվածեղ կը կերցնեմ: Նրա են
վոտները կը լվանամ, ջուրը խմեմ: Ականջը կան-
չեր, ամեն որ կասեր, քանց թե Մանուկին պսա-
կում եք, տվեք պատրաստեմ, տանք Եջմիածնի
ջերմարանը: Թարսի պես, սիրտս ել ենքան տը-
խուր ա, վոր լեզվով չեմ կանա ասի:

ՍՐԲՈ. Տո, ախրությունը դու ինձնից հար-
ցրու (ձեռքերը տնդադար չոքերին խփնլով).
Խանչալը վոր սիրտս կոխես, հալա մի լավ ել
խառնես՝ մեկ կաթիլ արյուն չի դա:

ՏԵՍԻԼ 3.

ՆՈՒՅՆԵՐ յեվ ԽԱԶՈ

ԽԱԶՈ. (Կամաց բացում ե դուքը, տխուր
ու խողիրդավոր): Ասաված ձեր տունը քանդա,
վոր քանդեց: Ձեր հարսնացուն հոր ուեվոլով ի-

Հայրական ի սրբագրութեան 70

բան զարկեց: Առում են, զարկելու քիմին՝ վոչ
տվեց, վոչ առավ, մեկեն հոգին տվեց:

(Սըսոն յեվ Սալթին անսպասելի գումար տար-
սափած, խելազարի նման իրար են նացում յեվ
ապուշ կտրում: Փոքր ինչ պառագա):

ՏԵՍԻ 4.

ՆՈԽԵՐ յեվ ՄԱՅՈՒՄ

ՄԱՅՈՒՄ. (Հանկարծ աղմուկով յեվ լացով
ներս ե վագում, մի բուռջ կոնիք առաջ շպրտե-
լով, վոտքերը զետին զարկելով, զոռում ե): ԶԵմ,
ը, աղե ջան, աղե, ասա, ասա, կարմիր կոճի-
քը ողից ող ա գողացեր, ող ա տարել...

ՄԵԼ ԿԱՐՈՒՐԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ
ԿԱՐՈՒՐԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ
ԿԱՐՈՒՐԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ
ԿԱՐՈՒՐԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԿՄԱՆ ԱԿԱДЕՄԻԿ անդամ
ՅԵՐԵՎԱՆ ԴՐԱՄ

ԱՐՄԻՑ

ՎԱՐԴ

ՀԿՄԱՆ

ՀԿՄ 23 թ

ՀԿՄԱՆ

ԿԱՐԾԱ

ՀԱՐ

ՀԿՄԱՆ

ՀԱՐ

2013

Григорий

ЧР

9666 56 км.

Тифлис, Р. Тбилиси № 1.